
www.criteriocristiano.com.ar

Персональный двуязычный сайт филолога Натальи Тер-Григорян-Демьянюк.
Библейские, лингвистические, исторические и литературные исследования

Նատալիա Տեր-Գրիգորյան-Դեմյանյուկ

«Մահէն աւելի»

Գարեգին Նժդեհի Յեղակրոնի քրիստոնէական
հիմքերը:



Բուենոս –Այրես 2020
“Credo”

Ter-Grigorian de Demianiuk, Natalia

Mahen aveli : Garegin Nzhdehi Cejacroni gristoneakan himqere / Natalia Ter-Grigorian de Demianiuk. - 1a edición especial - Ciudad Autónoma de Buenos Aires : Credo, 2020.

Libro digital, DOC

Archivo Digital: descarga y online

ISBN 978-987-47632-0-4

1. Patriotismo. 2. Historia de las Religiones. 3. Armenia. I. Título.

CDD 281.62

«Մահէն աւելի»¹
Գարեգին Նժդեհի Ցեղակրոնի
քրիստոնէական հիմքերը:

*Կրելով կնիքը Հայաստանի բնութեան ու պատմութեան՝ հայ էմ ես:
Մտածումով եւ ապրումներով, սակայն, ես մարդ եմ, համամա՛րդ:
Ես ընկերն եմ անիրաւուածի, եղբայրը՝ հալածողի, եւ զինակիցը՝
բռնեռէ բռնեռ աւելի արդար աշխարհի համար մարտնչողների:
Դաւանանքս է — մարդկայնութի՛ւն, աւելի՛ մարդկայնութիւն:
Ոգու մարդ եմ. (Գ. Նժդեհ: Անձնավկայություն)*

Գարեգին Նժդեհի անունը, նրա մահվանից գրեթե 70 տարի անց, շարունակում է հուզել աշխարհը՝ կատաղություն առաջացնելով նրանց մեջ, ում համար Հայաստանի գոյությունը կոկորդի ոսկորի է նման: Զրպարտված որպես ֆաշիստ, 1946 թվականին նա բոլշևիկների կողմից դատապարտվեց այն ժամանակվա առավելագույն պատժի՝ 25 տարվա ազատազրկման - և ուղարկվեց Վլադիմիր քաղաքի բանտ, որտեղ և մահացավ 1955 թվականին 69 տարեկան հասակում: Բայց դա ևս չբավարարեց նրա թշնամիներին: Նրա ստվերը նաև այսօր է գրկում նրանց հանգստությունից: Եվ նրանք ջանք չեն խնայում շարունակաբար ցեխ գցել նրա անվան և հիշատակի վրա, որ սուրբ են հայ ժողովրդի համար, ում նա կյանքի շունչ տվեց հենց այն ժամանակ, երբ վերջինս դատապարտված էր հոգևոր, քաղաքական և ֆիզիկական ոչնչացման:

Լինելով մարտիկ և միաժամանակ մտածող, նա շատ էր խորհում հայ ժողովրդի ճակատագրի մասին՝ փնտրելով նրա փրկության և բարգավաճման ուղին հնարավորություն: Նրա մտքերի և ռազմական փորձի արդյունքն եղավ իր հայտնի *ցեղակրոնը*, որը այսօր ներկայացվում է ինչպես «հայ ազգայնական գաղափարախոսության հայեցակարգ», իսկ ինքը՝ Նժդեհը՝ որպես *ֆաշիստ* և *նորահեթանոս*:

Բայց զարմանալին և տխրագույնը միայն այն չէ, որ նրան այդպես են անվանում հայ ժողովրդի թշնամիները, այլ այն, որ նման պիտակավորման մեջ իր ներդրումն ունի նաև հայ մտավորականության մի մասը: Լինելով կեղծմտավորականություն, որը քիթը քամուն բռնած ավելի շատ էր մտածում իր բարեկեցության, քան ճշմարտության բացահայտման մասին, և թող տալով ամենակարող թվացով թշնամու ստերին՝ նա, ըստ Նժդեհի, ասում էր. «*Ցեղակրոնությունը Հիթլերություն կը հոտի*», ինչով մեծ ցավ էր պատճառում հեերոսին, քանի որ, ինչպես ինքն Նժդեհն էր ասում, իր ցեղակրոնը ծագել է հիտլերիզմի առաջացումից շատ առաջ և համահունչ է «*Դավիթբեգյան ցեղապահ*

ուխտերի»,² այսինքն նա հետապնդում է այլ նպատակներ, որոնք ոչ մի ընդհանուր բան չունեն հիտլերիզմի հետ:

Նժդեհին արատավորող նմանօրինակ կեղծ հայտարարությունները արվեցին այն հույսով, որ ոչ ոք չի անդրադառնա նրա հոդվածներին ու ելույթներին, ցրված տարբեր լրատվական միջոցներում, և գլուխ դնի, որ հասկանա, թե ով է Նժդեհը իրականում և ինչ է ուսուցանում: Եվ այսպես ամեն մի հիշողություն նրա մասին կգնա ու կկորչի ժամանակի ընթացքում:

Բայց կյանքը զրկեց նրանց այդ պատրանքից. Նժդեհի անունը ավելի ու ավելի լսելի է դառնում արդեն ոչ միայն Հայաստանում, այլ նաև նրա սահմաններից դուրս: Եվ այժմ շատ կարևոր է դառնում Հայաստանի համար նրա անձի և ցեղակրոնի պարզաբանումը և ճիշտ մեկնաբանումը այլ ազգերի առջև: Ուստի անենք այդ պարզաբանենք նրա անձի հետ կապված բոլոր մոլորությունները, օգտվելով նրա իսկ գրավոր գործերից:

Աստվածաշնչում ասվում է. **«Բրուտի անօթները փորձում են կրակի մեջ, իսկ մարդը փորձում է իր խորհուրդների մեջ: Ծառերի մշակութիւնը երեւում է նրա պտղից, ինչպէս խօսքից՝ մարդու սրտի խորհուրդները: Մի՛ գովիր մարդուն նրա խօսելուց առաջ. այսպէս են փորձում մարդկանց:»** (Միքայ 26: 6-8)

Միանալով այդ մտքին՝ կարող ենք նաև ասել. *մի վատաբանի մարդուն նահաբան նրա հետ զրուցելը*, քանի որ «խոսքից են բացահայտվում մարդու սրտի խորհուրդները»:

Ավ՛ադ, հայտնի պատճառով մենք չենք կարողանա զրուցել Նժդեհի հետ, բայց ահա նրա խոսքը, իր *«սրտի խորհուրդները բացահայտող»*, մեր առջև է: Այն պահպանվել է նրա բազմաթիվ նամակների, ուխտերի, ելույթների և գրքերի տեսքով հրապարակված տարբեր թեմատիկ աշխատությունների մեջ, որոնք ցույց են տալիս թե ով է նա, որն է նրա իդեալը և ինչի համար էր պայքարում իր իսկ խոսքով, *«թրով ու գրչով»*:

Այն, ինչ արված է թրի միջոցով, հայտնի է. ի շնորհիվ Նժդեհի ղեկավարած հայկական ջոկատների ռազմական հերոսության, մեծանշանակ Սյունիքի մարզը, որ բոլշևիկները իրենց Հայաստանի աստիճանական մասնատման և վերջնական ոչնչացման քաղաքականության մեջ մյուս հայկական հողերի հետ միասին խոստացել էին Թուրքիային (ըստ երևույթին, որպես պարզևատրություն վերջերս նրա կողմից իրագործված Հայոց մեծ ցեղասպանության), մնաց նորաստեղծ Հայաստանում, որ 1918-ին հնի փլատակների վրա հրաշաբար վերականգնեց իր վաղուց կորցրած պետականությունը իր հնագույն երկրի մի բուռ տարածքի վրա:

Բայց այս աշխատանքի նպատակը Նժդեհի ռազմական հերոսությունները չեն, այլ նրա ցեղակրոնը:

Սակայն նախքան վերջինիս քննարկմանը անցնելը, կանգ առնենք **նրա ստեղծման պատճառի** վրա:

Ինչպես ինքն՝ Նժդեհն է գրում, այն ծագել է հայ ազգի և Հայաստանի ոչնչացման սպառնալիքի ֆոնին, որն առանձնակի ուժով բացահայտվեց 1915-ի ցեղասպանությանը հաջորդող տարիներին, երբ, ըստ նրա, «... դարերով օտար կրունկների տակ տրորուող» «քրիստոնեական արհամարհուած հօտը» (...), որ նոր էր եղերնու միջով անցել, «մարդկութեան անհրաւութեան կողմից աշխարհի քարտէզից անհետանալու» դատապարտվեց:³

Այստեղ Նժդեհը նկատի ունի 1923 թվականի Լոզանի պայմանագիրը, ամոթալի հայերի համար և ձեռնտու թուրքերի համար, կնքված, «այնպիսի ձեռով որ իբր թէ հայերը գոյութիւն չունենային»: Հայերի բարեկամ, **շվեյցարացի** հոգևորական Կրաֆտ Բոնարը Ազգերի Դաշնակցութեանը ուղղած Հ.Հ. Պատուիրակության մի գրութեան մեջ ասում էր. «ընդունելի չէ որ գրչի մէկ հարուածով ժողովուրդ մը ջնջուի»:⁴

Ի մի բերելով այս առանձնահատուկ պայմանագիրը՝ Նժդեհը գրում է.

*«Երբե՛ք, ա՛հ, երբե՛ք հայ անւան շուրջն ա՛յնքան ամօթանք չէր կուտակւել, որքան վերջին տասնամեակի ընթացքուս»:*⁵

Նկարագրելով այդ ժամանակի համաշխարհային քաղաքականությունը, նա մեջ է բերում Լակտենցու խոսքը, որ ասել է.

*«Նա,(...) որն սպանել է միայն մէկին, դատապարտուած է որպէս յանցագործ: Բայց մորթեցէք հազար հոգի, արիւնով հեղեղէք երկիրը, դիակներով վարակէք գետերը եւ ձեզ տեղ կը տան Ողիմպի վրայ...»:*⁶

Այսպիսով, իր ցեղակրոնի գաղափարի առաջացումը Նժդեհը կապում է 20-րդ դարի սկզբին Հայաստանի շուրջ զարգացած պատմական իրավիճակի և, նախ և առաջ, 1915 թվականի ցեղասպանության հետ, որի «խորհուրդն խորինն» էր, որ թելադրեց ցեղակրոնի անհրաժեշտությունը, առավել ևս որ հայերի աղետները շարունակվեցին, երբ Ռուսաստանում իշխանության եկան բոլշևիկները, որոնք համագործակցում էին թուրքերի հետ: Այդ ժամանակ էր, որ Նժդեհը ասեց. «Ցեղակրօնութիւն — ա՛յդ կը թելադրէ մեզ Ապրիլեան Եղեռնի խորհուրդը խորին»:⁷ «Երբ մեր Հայրենիքում կարմիր գերեզմանափորները հայոց ցեղն ու աստուածն են թաղում, եւ նրանց բրիչների ձայնն արձագանգում է խորհրդային գծից դուրս. մեր այս վշտաշունչ օրերին, թուրքը՝ Լոզանից ձեռք բերած անպատժութեան արտօնագիրը ծոցը՝ բաց ճակատ շրջում է արեւի տակ եւ իր եաթաղանից մազապուրծ հայութեան ոչնչացումը որոճում»,⁸ որտեղ որ նա գտնվի, - այդ օրերում, ինչպես գրում է Նժդեհը, «ամէն հայ մարդ քաջ գիտէ, որ նորահաս սերունդը հաւասարապէս վտանգուած է Փարիզում թէ Թաւրիզում, Սուրիոյ մէջ թէ Բալկաններում — մեր բոլո՛ր գաղութներում, եւ որ նա՛՝ նուաստութեան զգացումից ազատւելու համար, կարիք ունի մի ցեղային *ide e force*-ի, ցեղային կազդուրիչի — ցեղակրօնութեա՛ն»:⁹

Ինչպես նշում է Նժդեհը, այդ *idé e force* ծնվե՞ծ հենց նշված, «*մեզ համար անփառունակ օրերին, երբ չարագուշակ բուերն (էին) հսկում մեր հավաքական ճակատագրին*», և դարձավ մի «*կազդուրիչ կանչ*»¹⁰ արված մի բուռ կենդանի մնացած հայերին, շրջապատված բազմաթիվ թշնամիների օղակով, - մի կանչ, որն նաև այսօր է արդիական, որովհետև թուրքերի ցեղասպանական ձկտումները շարունակվում են նաև այսօր՝ դրսևորվելով իրենց անհեթեթ հայտարարություններում Հայաստանի պատմական չգոյության մասին, Երևանի իրենց պատկանելության և այլ ֆաշիստական և ցեղասպան պնդումներում:

Եվ այսպես, ո՞րն էր այդ կանչը: Իրականում, դա առաջարկեց, և շարունակում է առաջարկել վերադարձ դեպի ցեղը և ցեղի կրոնի վերականգնումը: Բայց որպեսզի հասկանանք, թե ինչ նկատի ունի Նժդեհը *ցեղակրոն* ասելով, նախ տեսնենք, թե **ինչ է նա հասկանում ցեղ բառի տակ:**

Նա *ցեղի* շատ տարբեր, իրար լրացնող սահմանումներ է առաջարկում, բայց նրանք բոլորը ծագում են մեկ գլխավոր սահմանումից, որը հստակ ցույց է տալիս, որ *ցեղ* ասելով Նժդեհը նկատի ունի հայի «*նախահոգին*»,¹¹ նրա «*ժառանգած էությունը*»: *Յեղը* նա անվանում է «*յաւիտենական հայ*», «*ժամանակների վկա*» և «*Աստուծոյ գործակից*»: ¹² «*Յեղն, - ասում է, - աստուածային այն բրուտն է, որ Հայաստանի հողից ստեղծեց մեր մարմինը, հայոց պատմութիւնից՝ մեր ոգին*»: ¹³

Եվ չնայած որ այստեղ նա օգտագործում է «*մարմին*» բառը, ակնհայտորեն նկատի ունի *հոգուն*, քանի որ, ինչպես տեսանք, խոսում է հավերժական կատեգորիաների մասին, այլ ոչ թե ժամանակավոր, քանզի պնդում է տարբեր տեղերում, որ «**ցեղն աւելի հոգի է, քան կաւ**»: ¹⁴

Նժդեհի այս խոսքերից պարզ է դառնում, որ *ցեղի* տակ նա հասկանում է երկու սկզբունքների միություն. *ժողովրդի հավերժական հոգու* և *այդ հոգին ստեղծած «աստվածային բրուտի»* միությունը, որը անվանում է նաև «*ոգու եւ արյան*» միություն: ¹⁵

Ոգի ասելով նա նկատի ունի Արարչին, այդ իսկ պատճառով անվանում է այն Արիական,¹⁶ իսկ *արյուն* ասելով նկատի ունի հոգու դրսևորումը մարդու մեջ, քանի որ, ըստ Նժդեհի, Արարիչը ար՛յան մեջ է «*զօրութենապէս դրել ժողովուրդների խորապէս ցեղօրէն ապրելը (ներցեղային բարոյականով առաջնորդուելը), (որ) դառնում է անհրաժեշտութիւն*»: ¹⁷

Ոչ մի դեպքում նկատի չունենալով միայն հայ ժողովուրդը, նա պնդում է, որ աստվածաստեղծ հոգի կամ, ավելի ճիշտ, «*նախահոգի*», ունեն բոլոր ժողովուրդները: Եվ այդ *նախահոգին* արտահայտվում է նրանց բարոյապես լավագույն ներկայացուցիչների մեջ:

«*Ազգերն, - գրում է նա, - իրենց ծոցի մէջ կ'ապրեցնեն մի որակական փոքրամասնութիւն, — սուրբը, լուսակիրը, հերոսը — որ կ'ապրի ոչ իր անձով եւ ոչ իր անձի համար, որ կը մեռնէ՝ չմեռնելու, կը մեռնէ՝ իր ցեղն ապրեցնելու*

համար: Ոգու ազնուականությունն է այդ համացեղ փոքրամասնությունը, ժողովուրդների ամենամեծ, անկորչելի եւ անմեռ հարստությունը»:¹⁸

Այսպիսով, *ցեղը*, կամ ազգի նախահոգին կազմում են նրա սրբերը, լուսակրողները եւ հերոսները, որոնց շուրջն ու ձևավորվում է ժողովուրդը:

«Սուրբը, - նշում է Նժդեհը, - որ ոսկե շղթայով անհատի ու ժողովուրդների **հայեացքը կապուած կը պահէ աստղերին՝ այդ վերջինները կեանքի ճահճէն ու բարոյական նեխութենէն զերծ պահելու համար: **Լուսակիրը, որ կը հալածէ խաւարը, անհատի եւ հաւաքականութեան հերոսը, որ կոթնած իր յաղթական սրին՝ արթուն կը հսկէ հայրենի սահմանների վրայ**»:¹⁹**

Այլ կերպ ասած, *սուրբը* ժողովրդի մեջ պահպանում է ոգու եւ հոգու առաջնությունը մարմնի հանդէպ; *լուսակիրը*՝ ժողովրդին ծանոթացնում է հավերժական ճշմարտությունների հետ, նրան իմաստություն շնորհելով, իսկ *հերոսը*՝ իրեն զոհաբերում է հանուն ժողովրդի կյանքի, այսինքն՝ հանուն Աստվածաստեղծ նախահուզու կյանքի:

Ուստի ցեղը – այդ ժողովրդի «որակական փոքրամասնությունը», - Նժդեհը հավասարեցնում է արիությանը, ասելով. «Ցեղը արիություն է, նա՛ն է արիապաշտություն»,²⁰ այսինքն պատկանում է Արարչին եւ պաշտում նրան, որպէս Աստծո Որդին եւ պատկանում եւ պաշտում Իր Հորը: Այդ կապակցությամբ *ցեղը* Նժդեհի համար «երկրորդ աստվածություն» է,²¹ որը պետք է պաշտվի Արարչից հետո, քանի որ *ցեղն* է պահպանում ժողովրդի կյանքը սրբության մեջ՝ հսկելով նրա բարոյականությունը, ուղղություն տալով նրա մտավոր դաստիարակչությանը, ապահովելով հասարակության մեջ արդարություն եւ խաղաղություն: «Ոչինչ են անհատը ու ազգը, - ասում է Նժդեհը, - եթէ նրանց պակասում է աստուածային գիծը: Առանց սրբի, լուսակրի եւ հերոսի՝ գոյություն չէր ունենայ հոգեւոր մշակոյթը, եւ մարդկային ցեղը դատապարտուած կը լինէր քարշ տալու անասնաբուսական մի տխուր գոյություն»:²²

Ներկայացվածից պարզ է, որ *ցեղ* ասելով Նժդեհը հասկանում է նաև «Ազգային բարոյականը»: «Դա է, - ասում է նա, - անհրաժեշտ հիմքը ազգի հոգեւոր կառոյցի, եւ դրանում է կայանում ազգի իրական ոյժը»:²³ Եվ շարունակում է. «. Ամէն ցեղ մեր Երկրագնդի վրայ կոչուած է իրականացնելու մի որոշ առաքելութիւն»: ²⁴ Դրանում է նրա պատմական դերը:

Իսկ ինչպիսին է այդ առաքելությունը, առաջին հերթին վկայում է ցեղի ընտրած կրոնը: «Այս կամ այն ցեղը, - գրում է Նժդեհը, - մօտաւոր ճշդութեամբ դիմագծելու համար՝ նրան պիտի դիտել իր հոգու հայելիի՝ իր կրօնի մէջ, որովհետեւ ցեղի մօտաւոր ինքնայայտնութիւնը հնարաւոր է միայն իր աստուածների միջոցով»:²⁵

Բնականաբար, այլ ժողովուրդների նման, նաև հայ ժողովուրդը ունի այդ աստվածաստեղծ կորիզը, կամ ցեղը, Նժդեհի կողմից սահմանված որպէս

«նախահոգի», որի մեջ Աստծո Ոգին է ապրում: Մեր կրոնը - քրիստոնեությունն է, իսկ Աստվածը՝ Հիսուս Քրիստոսը – մարմնավորված Աստծո Ոգին, Աստվածը և մարդը միաժամանակ, որում հայերը ենթագիտակցական մակարդակի վրա ճանաչեցին իրենց հորը՝ Հայկին: Նժդեհը ցեղը ուղղակիորեն անվանում է «աստվածանման Հայկ»:

«Ցեղը աստուածանման Հայկն է, - ասում է նա, - որ իր եռացող զայրոյթը եռաթեւեան աղեղի մէջ դրած՝ թշնամուն ուղղեց»,²⁶ - այսինքն այն Աստծո պատկեր ունեցող առասպելական հերոսը, որի անունն է կրում հայ ժողովուրդը: Ինչպես գրել եմ իմ «Նախահայր Հայկի ավանդության աստվածաշնչական արմատները» հոդվածում, Հայկը ավելի աստվածաշնչական և էսքատոլոգիական հերոս է, քան պատմական: Նա այն Ոգին է, որը հնագույն ժամանակներից դուրս է հանում իր որդիներին անասված Բաբելոնյան ստրկությունից դեպի Արարատյան լեռնաշխարհ, որը անձնավորում է Աստծո Սարը և աստվածային դրախտը Տիգրիսի և Եփրատի ակունքներին վերաբերվող, - այսինքն դեպի Աստծո Թագավորությունը:

Չնայած այն բանին, որ ըստ սովորույթի, Հայկը համարվում է հեթանոսական հերոս-աստված, ավանդույթի ցանկացած ուշադիր հետազոտողը կհասկանա, որ այնտեղ խոսքը գնում է Հիսուս Քրիստոսի մասին, որը, ըստ Հովհաննես առաքյալի, իր որդիներին կազատի բաբելոնյան պոռնիկի ճիրաններից, որին վերջ է վերջո կվոչնչացնի Իր Ոգու շնչով:²⁷

Թեպետև ենթագիտակցականորեն, բայց Նժդեհը հասկանում է Հայկի և Հիսուս Քրիստոսի պատկերների նույնությունը, քանզի խոսելով հայերի կողմից քրիստոնեությունը որպես համաժողովրդական կրոն առաջինը ընդունելու պատճառի մասին, նա այդ փաստը բացատրում է հայերի և քրիստոնեության խորը ոգեշնչվածության փաստով:

«Ոգեշունչ էր քրիստոնեութիւնը, - գրում է նա, - եւ հէնց այդ է պատճառը, որ նրա գիրկը նետուղներէն առաջինը՝ եղաւ հայր: Հասկանա՛նք — մեր ժողովրդի ամենագորաւոր զէնքը միշտ էլ եղել է ոգին»:²⁸ «Ոգեշունչ է, - կրկնում է նա, - հայ ռազմիկը եւ այդ է պատճառը, որ նա Արեւելքի լաւագոյն պարտիզանն էր, է՛ եւ այսօր, որ նա շատ անգամ սակաւաձեռն ոյժերով հսկայաթիւ բանակների դէմ է ճակատել, որ կռիւներ է վարել ամենադժուարին պայմանների մէջ՝ կէս-կուշտ, կէս-քաղցած, առանց նւագագոյն տէխնիք միջոցների, առանց զինակիցների, մենա՛կ ու յաճախ՝ իսպառ կտրւած աշխարհից»:²⁹

Այդ ժամանակ նա առաջնորդվում էր ցեղի ոգով, որը ստիպում էր նրան իր կյանքը զոհաբերել ցեղի կյանքը ապահովելու համար:

Հենց այսպիսի զոհաբերություն է ուսուցանում քրիստոնեական կրոնը, որը կոչ է անում զոհաբերել ժամանակավորը հանուն հավիտենականի, նյութականը հանուն հոգևորի:³⁰

Հայերը, մեկ անգամ կորցնելով իրենց ցեղի էության ընկալումը և կապվելով հեթանոսների հետ՝ հանկարծ Քրիստոսի հայտնվելով, ինչպես արդեն նշվեց,

ենթագիտակցականորեն ճանաչեցին Նրա մեջ իրենց Հորը՝ Հայկին և առաջինն եղան, որ ընդունեցին քրիստոնեությունը որպես իրենց պետական կրոն: Իրականում դա վերադարձ էր դեպի իրենց ցեղը:

Դրանով է պայմանավորված նաև այն, որ բոլոր այսպես ասած հայ «հեթանոսական» աստվածներից Նժդեհը միայն երկուսին է նշում – բուն հայկական աստվածներին (քանզի մյուսները փոխառված են օտար ազգերից)։

«*նախահայր*» Հայկին, որին անվանում է «*վերին արթուն աչք հետևող ազգի բոլոր շարժումներին*»³¹ և Վահագնին՝ «*Արիության եւ հաղթանակի հին հայոց աստվածին*»,³² որը իր էությանը ներկայացնում էր մի այլ անվանում նույն «*աչքի*», նույն Հայկի, որը իր զայրույթի «*երեքթևյան նետով*» սպանեց Բաբելոնյան Բելին, ճիշտ այնպես, ինչպես գրված է աստվածաշնչական Աստծո մասին. «**Ուժեղ է նրա աջը որ լարում է աղեղը, նրա կողմից նետված սուր նետերը չեն թուլանա, երբ դրանք ուղարկվեն երկրի ծայրերը** » (3 Եզդրահ. 16: 13):

Ի դեպ, Հայկին է պարտավոր *Արիացի* բառի ծագումը (աստվածաշնչյան *Արիել*, այսինքն՝ *Եռուսադեմ*), քանի որ նրա անունը ծագել է «*Հայր*» բառից, որը ցուցանում է Երկնային Հոր, կամ Արարչի Ոգուն, իսկ «*կ*» պատկանելիություն նշանակող վերջածանցը ցույց է տալիս, որ խոսքը գնում է *Հորը պատկանողների*, կամ *Աստծո որդիների* մասին: Այս է *արիացի* միջազգային բառի և *air, aero, aire* արմատների ծագումը, որ *օդի* հետ – այսինքն *Ոգու* հետ – կապված նշանակություն ունեն:

Ներկայացնելով հայ ժողովրդի արիական կորիզը՝ Հայկը նաև անձնավորում է հայ ազգին բնորոշ, կամ ներդրված նրա մեջ առաքինությունը: Դա հերոսական ոգու առաքինությունն է՝ որ պայքարում է հոգին քայքայող նյութապաշտության դեմ հանուն նրա ազատագրումի մարմնական ստրկությունից: Հենց դրա մեջ է նրա պատմական դերը. իր ցեղին և բոլոր նրանց, ովքեր կմիանան նրան, նյութական աշխարհից դեպի հոգևոր աշխարհ դուրս բերել, բազմալեզու Բաբելոնից հանել և դեպի «միալեզու» Արարատյան լեռնաշխարհի բարձունքները տանել, - այսինքն դեպի Աստծո Ոգու թագավորությունը տանել:

Փաստորեն, հայի մեջ Աստծո կողմից դրված այս աստվածային գաղափարի մասին է խոսում Նժդեհը՝ ընդգծելով, որ «*Ընդունել ցեղի գերագահությունը ժողովրդի վրայ, նշանակում է՝ ընդունել յախտենականի գերագահությունը առօրեայի, ոգուն՝ նիւթի վրայ*»: ³³

Այդպիսին էր, ըստ Նժդեհի, հազարամյակների խորքից եկող հայերի ինքնագիտակցումը որպես ոգու ժողովուրդ: Ինչպես նշում է Նժդեհը, «*Հայր լինելիական է, — հաստատում է հայոց հեթանոս կրօնը*»: ³⁴ «*Լինելիական է հայր — ահա՛ ակն ու աղբիւրը մեր մեծ Յոյսի եւ Զօրոյթի: Այս է, որ յուրախութիւն թուրքի, դեռ չի գիտակցում հայ մտաւորականութիւնը՝ իր մեծամասնութեան մէջ*»: ³⁵

Այլ կերպ ասած՝ այդ «*ակն ու աղբիւրը մեր մեծ Յոյսի եւ Զօրոյթի*» «**էականը, - (դա) յախտենական հայկականութիւնն է, որ ազգութիւնը նուիրագործում է իր ամէն մի անդամի մէջ**»: ³⁶

«Հավիտենական» նշանակում է *հոգևոր*, անխորտակելի, որի կապակցությամբ հոգևոր է նաև «*նուիրագործումն*»: Վերջինը, ըստ Նժդեհի, ապրում է մեր «*ցեղային օրգանական մտածողության*» մեջ, որը «*Մեր պապերից մեր ականջն է ընկել, մեզնից մեր որդիքը կիմանան*»: ³⁷

Ըստ Նժդեհի՝ ցանկացած ցեղի նպատակը, որ ազգը «*նվիրագործում է իր ամեն անդամի մեջ*», դա իր համար *հայրենիք* ստեղծելն է, իր սեփական պատկերով, այսինքն՝ այն բնակավայրի ստեղծումը, որն առավել հարմար կլինի իրեն համար: Այդ պատճառով, Նժդեհը նույնացնում է հայ ցեղը Հայաստանի հողի հետ: «*Հայ ցեղը, - ասում է նա, - դա հայ հողն է՝ համակ բոց ու զօրոյթ, որ ասում է անխօս ես սնում եմ նրանցով, որոնց՝ սնուցանում եմ*»: ³⁸

Հետևաբար, այս հողի կյանքը կախված է իրենից քանդակված ցեղից: Յեղի (*նախահոգու*) և հողի կենսաբանական կապն այնպիսին է, որ առանց միմյանց նրանք կենդանի չեն: «*Յե՛ղն է, - նկատում է Նժդեհը, - այս կամ այն երկիրը դարձնում հայրենիք: Հողն առանց ցեղի, ասել է՝ մարմին առանց հոգու*»: ³⁹ Ուստի, ասում է Նժդեհը, ինչպես հոգին, այնպես և հայրենիքը «*մի հոգևոր իրականություն է*», «*մի բան է ոգուց եւ ոգու համար*», ⁴⁰ - այսինքն մի բան Աստծուց և Աստծո համար:

Այլ կերպ ասած, «*Հայրենիքն է ոգու ամենասրբազան թանձրացեալ ստեղծագործությունը*» ⁴¹ իրեն իսկ համար: Հետևաբար, լինելով մասշտաբով հոգի, նույնքան սրբազան է, որքան մարդկային հոգին, և միավորում է իր մեջ Աստծուն և ժողովրդի հոգուն, այսինքն՝ ցեղը: Այնպես որ նրա հոգևոր իրականությունը նման է *հոգու իրականությանը*, - որին Աստղո Ոգին ստեղծեց հենց Իր համար, իր իսկ մարմնավորման համար նրա մեջ, - և *պարտեզի իրականությանը*, որում նա տեղադրեց այդ հոգին:

Դրանից ելնելով՝ Նժդեհը ասում է, որ իր «*հոգին զոյգ յենարաններ ունի - Աստուած եւ Հայրենիք*»: ⁴² Թեև, նույն հենարանները պետք է ունենա նաև այլ ազգերի հոգին, քանզի նա նկատում է.

«*Մեր երկրագնդի վրայ, ուխտերից ամենասրբազանը մի՛շտ էլ կնքուած է եղել Աստուծոյ եւ Հայրենիքի համար: Deo et Patria! Նմաններից էր Մամիկոնէից Ուխտը*»: ⁴³

Հայրենիքը այս իմաստով հակադրվում է անձի եսասիրությանը, քանի որ ենթադրում է բոլորի բարգավաճումն հավասարապես, որին հնարավոր չէ հասնել առանց հոգևոր վեհացումի:

Հետևաբար պատահական չէ, որ նրանք, ովքեր հայերի համար դժվար օրերին շփում են ունեցել նրանց հետ, նկատել են վերջինների մեջ այդ Արիական կամ Աստծո Ոգու վառ դրսևորվածությունը : Այդպիսին նրանց տեսավ, օրինակ, Ֆրանց Վերֆելը, ⁴⁴ որ հայերին բնորոշեց որպես «*ոգու ժողովուրդ*»: ⁴⁵

«*Այո՛, - շարունակում է այդ միտքը Նժդեհը, - ոգու ժողովուրդ ենք*»: ⁴⁶ Իսկ «*Ի՛նչ էինք երեկ: Այդ մասին թող խօսի ինքը՝ դարերի հայր. «Մի տնից չէինք, բայց մի ձենով էինք*»: Յեղօրեն բարոյական էր հայր. (որովհետև ասում էր) «*Մէջք մէջքի տանք՝ սարեր շուռ տանք*»: Սոցիալապէս առողջ էր նա. (որովհետև ասում էր)

«Հացն Աստծուց, ես էլ հետք, ո՛վ հասնի՝ թող ուտի»: Մոցիալապէս արդար էր. (հաստատելով) «Այն մարդը, որ Աստուած ունի՝ աղքատ չէ»: Բղէալիստ էր նա. (որովհետև ասում էր) «Հող ու մոխիր կե՛ր, տմարդէն հաց մի՛ մուրար»... Յեղօրէն հպարտ էր. (ասելով) «Հայր չոգնի՝ չի՛ նստի»: Ծուլութեան հացը չսիրող է. (քանզի ասում էր) «Ոտքդ քարին զարնուի՝ խղճմտանքդ քննէ՛»: Բարոյապէս զգայուն էր. (որովհետև ասում էր) «Իր ծառը ծարաւ թողած ուրիշինը ջրողը ո՛չ յարութիւն ունի, ո՛չ էլ թողութիւն»: Ազգայնօրէն զգաստ էր. (ասելով) «Առիծը կատուին խեղդել չեմ տայ»: Տղամարդ էր հայր: (քանզի հաստատում էր) Այս էինք երէկ — որակի՛ ազգ»: ⁴⁷

Այսպիսով Նժդեհը հաստատում էր՝ որ «Յեղամարդ էր հայր՝ յաւիտենականի ու կատարելութեան, ընկերային արդարութեան ու հերոսականի, միութեան եւ ուղղութեան զգացումներով զօրաւոր», ⁴⁸ - ցեղամարդ, որին ժողովուրդը հաճախ դավաճանում էր, և որը, այնուամենայնիվ, թույլ չէր տալիս, որ վերջինը ընդմիջտ անհետանա ի շնորհիվ իր գոյութեան ծանրագույն պայմանների:

Իսկ ցեղամարդ լինելը, ինչպէս արդեն ասվեց, և ինչպէս պնդում է Նժդեհը, նշանակում է՝ լինել Արիացի, Արարչի ոգու կրող, - նույնը, ինչ Աստծո որդի լինել: Այդ պատճառով Նժդեհը հատուկ ուշադրություն է դարձնում **արիականությանը**.

«Արին է յանդգնողը, - ասում է նա, - անձնագոհը, մարդասէրը: Արիութիւնն է շարժում պատմութեան ընթացքը: Մեծ սիրտ, ազնիւ նկարագիր, վսեմ մտածում – արիութեան հարազատներն են այդ բոլորը, ճառագայթները միեւնոյն արեւի»: ⁴⁹

«Արժէքներ, սրբութիւններ, մարդկայնութիւն, գաղափարներ, իղէալներ, հոգեկան ոյժ, լեզու, արուեստներ, իմաստութիւն, իմաստասիրութիւն, առաջնորդութիւն, հերոսական, փառք — ոգին է այդ բոլորի ստեղծիչը»: ⁵⁰

Արիացին իրեն էութեամբ կապում է յաւիտենականը եւ առօրեան: Նա է «Ճշմարիտ առաջնորդը, առանց որին ոչինչ են իշխանութիւնն ու իշխանաւորը»: ⁵¹

Նույնիսկ ավելին: Նժդեհը նրան անվանում է նաև «մեծ մարդ», որը միևնույն ժամանակ բնութագրվում է պարզությամբ և հերոսությամբ, ով իր ներկայությամբ փոխում է շրջապատի հոգևոր մթնոլորտը: Ըստ Նժդեհի, նա է, ով կյանքին տալիս է արժէք, իմաստ և վեհություն: Նրա խոսքը գործում է կրակոտ կայծի պէս՝ բոցավառելով իրեն հետ կապված սրտերն ու զգացմունքները: Նրա ներկայությունը ազնվացնում է, ոգեշնչում, ամրացնում է հոգիները: Նրա շնորհիվ անհնարինը դառնում է միայն դժվար, իսկ դժվարը՝ հնարավոր, երազները դառնում են նպատակ, իսկ նպատակներն իրագործվում են: Նա փոխում է ժողովրդի հոգեբանությունը, նրա ճակատագիրն ու պատմությունը:

«Մեծ մարդը, - ամփոփում է Նժդեհը, - Դա աստուած է, միայն այն տարբերությամբ, որ դա իրեն աստուած կը զգայ միայն իր կեանքի որոշ վայրկեաններում եւ որպէս այդպիսին կը կերտէ իր յաւերժական, իր աստուածարժան գործերը»: ⁵²

Այստեղ հարկ է նշել, որ Արիացուն աստված անվանելով՝ Նժդեհը ենթադրում է նրա մեջ աստվածային կայծի առկայությունը,- այն լատենտ ուժը, որը կարող է փոխակերպել մարդուն այնպիսի ձևով, որ նրա մեջ հայտնվի Աստծո կերպարը: Այս միտքը հագեցած է աստվածաշնչյան հայտնությամբ այն մասին, որ մարդը ստեղծվել է որ Աստծո պատկերն ու նմանությունը լինի, այսինքն՝ նա ստեղծվել է Աստծո մարմնավորման համար, որպես Աստծո որդի, որպես անոթ Աստծո (կամ *Հայրական-Արիական*) Ոգին կրելու համար, նա ստեղծվել է ինչպես Աստված: Այս Նժդեհի խոսքերը հիշեցնում են մեկ ուրիշ խոսք, որ Հիսուս Քրիստոսը ասած նրանց, ովքեր Նրան մեղադրում էին Իրեն Աստծո Որդու - և, հետևաբար, Աստծո հետ - նույնացնելու համար. **«Ձեր օրհնքում չէ՞, որ գրուած է. «Ես ասացի, թէ աստուածներ էք»:** (Հովհ 10: 34)

Արիացին՝ որպես Աստծո Ոգին կրող, բացարձակապես անկախ է հոգով, և, հետևաբար, չի հետևորդում մարդուն, այլ հետևորդում է միայն Հոր Հոգուն:⁵³

Նա այն անձն է, ով լիովին նվիրված է ժողովրդի *նախահոգուն*, ում մարմնավորում է և որի համար նա պատրաստ է ցանկացած զոհաբերության, այդ թվում՝ պատրաստ է զոհաբերել իր մահկանացու մարմինը հանուն ցեղի հավերժության...

*«Նմանների՛ն, - ասում է Նժդեհը, - գերագոյն նուիրումի ընդունակների՛ն է միայն տրուած զգալ իրենց ոգու աննահուրթիւնը, եւ, հէնց սրբանում է նրանց բարոյական անկապտելի իշխանութիւնը այն ամէնի վրայ, որ ստոր է, անցողական ու եղծանելի մարդկային կեանքում»:*⁵⁴

Նրա բացարձակ անկախությունը նման է այն անկախությանը, որը նկատի ունենալով Հիսուսը ասաց. **«Բայց ես մարդկանցից չեմ, որ վկայութիւն եմ առնում (...)** Դուք ինչպե՞ս կարող էք հաւատալ, քանի որ իրարից էք փառք առնում եւ չէք որոնում այն փառքը, որ միակ Աստծուց է գալիս», (Հովհ 5: 34, 44) – այսինքն Ոգուց, քանի որ Աստվածը Ոգի է: (Հովհ 4: 24)⁵⁵

Նման ընկալումը բնորոշ է միայն Արիացուն և բխում է իր աստվածային ծագման գիտաբացումից, իր մեջ Աստծո ներկայության զգացումից:⁵⁶ Այդ պատճառով արիացին, որպես Աստծո որդի, Աստծուց է փառք որոնում, և ինչ որ անում է, Աստծո գաղափարը իրագործելու համար է անում:

Արիական ցեղի վերոհիշյալ սահմանումը Նժդեհը հաստատում ու պարզաբանում է նաև *ցեղ* և *ժողովուրդ* հասկացությունների տարբերության միջոցով, որը հետևյալ ձևով է արձանագրում.

*«ժողովուրդը հոգեւոր ցրուածութիւն է. ազգը՝ ոգի, որի ամենակատարեալ արտայայտութիւնը հանդիսանում է հանճարը, սուրբը, հերոսը — ընտրանին, ցեղը կենտրոնացուցիչ ոյժ է»:*⁵⁷ . *«Մինչ ժողովուրդը միջակութիւններ կը ծնի, ցեղի ինքնայայտութիւնը տեղի կ'ունենայ հերոսների, սուրբերի ու լուսակիրների միջոցաւ»:*⁵⁸ *«Ճողովուրդն ընդօրինակող է, ցեղը՝ ստեղծագործ ինքնատիպութիւն: Իբրեւ անկրկնելի անհատականութիւն՝ դա թոյլ չի տալիս ժողովրդին դիմագրկուելու եւ կորչելու «մարդկութեան» մէջ: Իբրեւ*

բնակենսաբանական գործոն՝ ցեղը ներգործում է ազգութեան վրայ՝ սնուցանելով նրա արմատները»:⁵⁹

«Ժողովուրդը՝ դա ա՛յն վախկոտն է, որին ուզեցին գործի ուղարկել եւ նա առարկեց — «դուրսն առիծ կայ»: Յեղն իրենից դուրս առիծ չի ճանաչում: Յարանւանական է ժողովուրդը — կաթուղիկէ, բողոքական եւ այլն ցեղը մի շտ էլ մի՛ է եւ ամբողջական: Ժողովուրդը ասել է դասակարգ եւ դասակարգային եսականութիւն, ցեղն ընկերային արդարութիւն է եւ հնարաւոր հաւասարութիւն»:⁶⁰ Ուստի ցեղը Նժդեհը անվանում է «ընկերային արդարութեան անշեղ դատաւոր, որ կը մերժէ դասակարգային ամեն հասկացողութիւն»:⁶¹

Ինչպէս տեսնում ենք, ժողովուրդն այն զանգվածն է, որի որակը որոշվում է Աստվածային (արիական) Ոգու կամ նրա կրողների - ցեղի հոգևոր վերնախավի - առկայությամբ կամ բացակայությամբ: Այս իմաստով ժողովրդի և նրա հոգևոր վերնախավի միջև եղած կապը նույնն է, ինչ մարմնի և հոգու միջև: Այս փաստը հաշվի առնելով՝ Նժդեհը ժողովուրդը ավելի շատ համեմատում է «*հաշիտեսու ուղեղի*» հետ, իսկ ցեղը՝ «*աւելի սրտի*» հետ, «*որ անհաշիւ կերպով զոհաբերել գիտէ*»:⁶²

Նման զոհաբերությունը, ըստ Նժդեհի, արիական ոգու հիմնական և բարձրագույն բնութագիրն է, որովհետև այն հիմնված է, նրա ասելով, «*աստուածային արհամարհանքի վրա դէպի մահը*»⁶³ հանուն սիրո (մարդու, ընտանիքի, կրոնի, ժողովրդի, մարդկության): Այսպէս, հանուն մարդկության փրկության մեր Տեր Հիսուս Քրիստոսը անտեսեց մահը, Նա, Ով ասել էր. «**Աւելի մեծ սեր ոչ ոք չունի, քան այն, որ մէկն իր կեանքը տայ իր բարեկամների համար**»: (Հովի 15: 13) Այսպէս, մահը անտեսեցին նաև Վարդան Մամիկոնյանը և նրա զինակիցները իրենց քրիստոնյա կրոնի պահպանման համար, որը, ըստ էության, հայ ցեղի հնագույն, *մեսիական* կրոնն էր: Նույնպէս վարվեցին նաև շատ ուրիշ հերոսներ, ինչպէս հայոց, այնպէս էլ օտար ժողովուրդների պատմություններից: Բոլորը, ըստ Նժդեհի, իրենց «*մահով հաղթանակեցին մահը*» եւ այսպիսով «*իրենց ենթարկեցին յաւիտենական կեանքի անմահությունը*»,⁶⁴ քանզի արիական ոգին դա այն ոգին է, որ մահվան ճամբով մարդուն տանում է «*դէպի արեւը, կեանքի աղբիւրը, լոյսը*»:⁶⁵

Այդ հերոսական ոգու կրողը մահից էլ ուժեղ է և անձնավորում է հավիտենականության ներկայությունը մարդու մեջ: Նրա ուժը ճշմարտության մեջ է: Ընդգծելով այդ փաստը՝ Նժդեհը ասում է. «*Ոյժ է ճշմարտությունը: Չկայ ոյժ առանց ճշմարտութեան: Չկայ փրկութիւն առանց ոյժի*»,⁶⁶ և դա այդպէս է, որովհետև «*ճշմարտությունը գործում է և ազդում միայն ոգու միջոցով*»:⁶⁷ Նա այն առաքինությունն է, որի վրա է հիմնված Աստծո ստեղծագործությունը, ինչու համար և Իր Որդուն - նպատակը Իր ստեղծագործության - Տերը անվանում է *Արդարության աջ*: (Եսա 41: 10) Նրանով է ամեն ինչ ստեղծվում, քանզի, ինչպէս Նժդեհը պնդում է, «*Յեղն արարիչ է, ժողովուրդը՝ արարած*»,⁶⁸ և որովհետև արդարությունն ու ճշմարտությունը - դա բարոկան կատեգորիա է, *արիությունը*

- այսինքն՝ արդարության կրողությունը – Նժդեհը անվանում է *«միակ ճշմարիտ բարոյական»*,⁶⁹ իսկ արիացուն - ցեղի մարդուն՝ - *հերոս*, որ *«մահէն աւելի զօրաւոր մարդն է, յաւիտենականի կրողը ու սպասաւորը մեր անցաւոր կեանքում»*:⁷⁰

Միայն Արիացուն, ըստ Նժդեհի, կարելի է վստահել երկրի և ժողովրդի կառավարությունը,⁷¹ քանի որ նա հավերժական, անմեռ ճշմարտության կրողն է - այն *անմեռ ճշմարտության*, որ վերաբերվում է *հայրենիքին, մահին, հաղթանակին, առաջնորդին*:⁷²

Ժողովրդի և ցեղի համեմատությունից արած Նժդեհի ընդհանուր եզրակացությունը հետևյալն է. *«միշտ էլ արդար է, որ մեր կեանքում օրէնսդրէ եւ առաջնորդէ ցեղը, եւ ոչ թէ ժողովուրդը»*:⁷³

Այս հարաբերակցության մեջ ցեղը ներկայացնում է հոգուն, իսկ ժողովուրդը՝ մահկանացու մարմին: Ուստի, ըստ Նժդեհի, *«Հայր պիտի դաւանի <հոգու> առաջնութիւնը նիւթի նկատմամբ»*,⁷⁴ ինչը նշանակում է, որ նա *ժամանակավորին միշտ պիտի նախընտրի հավիտենականը*:

Արիական կամ ցեղային ոգու կարևորությունը նա ցույց է տալիս նաև այդ ոգու **բացակայության միջոցով**:

Ի՞նչ է պատահում ժողովրդի և մարդկության հետ, երբ արիական ոգին հեռանում է իրենցից:

Ըստ Նժդեհի, *«հէնց որ քուն է մտնում Աստուածայինը հասարակութեան մէջ միանգամից գործի են անցնում մութ ուժերը - նախանձը, թշնամանքը, չարութիւնը»*,⁷⁵ *անասնացող նիւթապաշտությունը, ժխտումը այլասիրական ամեն տեսակի պարտականութիւն, անձնական կաշին իր Աստուածն դարձնելը, վախը և անվստահությունը դեպի ապագան»*,⁷⁶ քանզի արիական ոգու, կամ ցեղի ոգու, բացակայությունը անձի մեջ բերում է հավերժության զգացումի վերանմանը, իսկ փոխարենը հայտնվում է մահվան վախը, որով գունաթափվում է ամենը, ինչ նա անում է:

«Քանի դեռ մարդ արարածը անզօր զոհն է վախի՝, - ասում է Նժդեհը, - կեղծ են ե՛ւ կրօնը, ե՛ւ գիտութիւնը, ե՛ւ դաստիարակութիւնը: Չկայ հրէշ, աւելի անողորք եւ անողորմ քան վախը՝ կոյր անասունների, — բնագդական՝ վայրենիների եւ գիտակցական մարդու մէջ. մի հրէշ, որը կռուադաշտում իրեն ապաւինողներին յանձնում է թշնամու եւ մահուան ձեռքը: Վախը սպանում է մեր խիղճը, մոռացնել տալիս մեր պարտականութիւնները, ուժեղացնելով անասունը մեր մէջ»:⁷⁷

Վախը միշտ ուղեկցվում է *«ամեն գնով գոյատևելու խենթ ցանկությամբ»*, որը Նժդեհը համարում է *«պարտվածի հոգեբանություն»*: Վերջինը պայմանավորված է ծայրահեղ ֆինանսական հոգսերով, համայնքի և եղբայրության չզարգացած զգացողությամբ, կարգավորված գիտակցության բացարձակ բացակայությամբ: Պատերազմի ժամանակ վախին նպաստում է ավանային հայրենասիրությունը,

ինքնասիրության ցավը, ռազմական ղեկավարների չար նախանձը, կազմակերպվածության պակասը, թշնամու մասին սխալ պատկերացումները, անգործունակությունը և այլն:

Եվ այս ամենը հետևանք է այն բանի, որ մարդը, չտարբերելով հոգին մարմնից՝ առաջնորդվում է մարմնով, որը, ըստ Նժդեհի, պարզապես կավ է:

*«Հակառակ իր ստեղծած մեծ քաղաքակրթության՝ մարդը, - նկատում է Նժդեհը, - այսօր էլ դեռ աւելի կաւ է, քան՝ ողի: Այդ իսկ պատճառով, նա յաճախ առհաւօրէն մղում է ընդվզելու այն բոլոր զսպիչ արժէքների, ճշմարտութեանց եւ սրբութիւնների դէմ, որոնք կոչուած են սանձուած պահելու անասունն ու անասնականութիւնը նրա մէջ»:*⁷⁸

Այդպիսինը, ըստ Նժդեհի, չնայաց որ *«Քաղաքականապէս ազատ (է), բայց եւ այնպէս ստրկականության շղթաների հետքեր (է) թողնում»*,⁷⁹ քանզի նա սեփական մարմնի ստրուկն է: Իսկ այդպիսի ստրկությունը նրա մեջ բազում չարություններ է ծաղկեցնում, որոնցից առավել զգվելին նախանձն է:

*«Չար անասուն է մարդս, երբ նախանձում է, - ասում է Նժդեհը: - Մեր աշխարհում միշտ էլ վատասիրտը հայհոյել է աներկիւղ ասպետին, երկչոտը՝ մութ անկիւնից քար նետել հերոսին»:*⁸⁰

Նախանձի առկայությունը մարդու մեջ արիական սկզբունքի բացակայության վկայությունն է: Եվ երբ ժողովրդի առաջնորդներն են անարի, դա ժողովրդի կյանքում միշտ վերածվում է ողբերգության: Նժդեհը մի օրինակ է բերում հայերի այդպիսի կործանիչ նախանձի, որը ժամանակին հանգեցրեց Հայաստանի պետականության կորստին:

«Դա մի ժամանակաշրջան էր, - գրում է նա, - երբ նախանձի դելով բռնուած հայ նախարարները, չնչին բացառութեամբ, ծառայութիւնն օտարին աւելի տանելի կը համարէին, քան իրար ենթարկուելը: Թշնամիների բարբարոս հարկահաւաքութեան դիմացող հայն այլեւս չէր հանդուրժեր իր եղբոր մի հատիկ դառը խօսքին: Ոչ ոք կը ճանաչէր իրենից աւելի ձեռնհասը, արժանաւորը, մեծը: Քիչերը կուզէին հասկանալ, թէ հարազատ հայրենիքում եղբոր աջակցութիւնը, որքան էլ որ համեստ լինի, աւելի արժէ քան արտաքին օգնութիւնը, որը չէ տրուում ձրիաբար: Կար երկպառակութեան մաշող ախտը, որը կը մղէր Սահակ Մեծին իր դառնութեան ժամերից մէկում զարկելու հայութեան երեսին՝ «Քահանայանալ ի վերայ տիրանենգ, եւ տիրասպան, եւ մատնիչ ժողովրդոց ոչ կարեւ» : Կար ներքին իրարակերութիւնը, որ հայ կաթողիկոսին արդար ցատումով ասել կուտար — «Ի տանէ առաւել քան յօտարաց բուսաւ մարտ դառնութեան: Յովհաննէս» :

Կար ներքին «դժոխքը», որ կը թելադրէր հայ պատմագրին — «ազգս հայոց, որք մատամբ եւ կամօքն իւրեանց կուրացուցին զաչս իւրեանց. զի ինքեանք կործանեցին զթագաւորութիւն իւրեանց: Առաքել» Կարծէք ճակատագիրը

լեզուների խառնակութեան նոր պատիժ է տուել մեզ՝ իրար չհասկանալ: Զարհուրելի է օրուայ հայ խօսքը. — «Անոնց բերանը բաց գերեզման է»⁸¹

Այս բոլորից Նժդեհը եզրակացնում է, որ անարիի առկայությունը ժողովրդի մեջ հավասար է ներքին թշնամի ունենալուն, և որ «*քանի դեռ կայ անարի հայր — կը լինի ներքին թշնամին. իսկ քանի դեռ կայ այդ հրեշը — քաղաքական աւելի բարւօք վիճակը երազ պիտի մնայ մեզ համար*»:⁸² Եվ հետո եզրափակում է.

«Ոսկրի որդ» այսպէս է խօսում Աստուածաշունչը նախանձի մասին: Միշտ էլ թուլութեան ծնունդ՝ նախանձը չէ կարողանում տանել ուրիշների բարիքը, յաջողութիւնը, փառքը եւ զինում է նրանց դէմ»:⁸³

Եվ վախը, և նախանձը և նման մարմնական այլ զգացումները մարդու ապականիչ էգոիզմի վկայությունն են: Այդ տեսակի համար բարոյականությունն ընդհանրապէս գոյություն չունի: Իսկ, ինչպէս ասում է Նժդեհը, «*բարոյապէս տկարացած մարդը իր անկումն արդարացնելու հաշուով, (միշտ էլ) փնտռել է մի տեսութիւն, մի դաւանանք, մի իմաստասիրութիւն*»,⁸⁴ որը կքանդէր Աստծո Ոգու կաշկանդող իշխանությունը իր վրա: Հենց այդպէս, ըստ Նժդեհի, հայտնվեցին բոլոր քաղաքական շարժումները՝ ժողովրդավարությունը, լիբերալիզմը, մարքսիզմը, սոցիալիզմը, լենինիզմը և այլն, որոնց մեջ նա նկատում է կեղծավոր երկիւղգոյություն, քանզի «*թուղթի վրայ, տեսականօրէն, ենթարկուելով հանրութեան կամքին, գործնականում — պատակտելով եւ աղաւաղելով ազգի ոգին — նրան ծառայեցնում են իրենց անձնական եւ խմբակցական շահերին*»: Դրանք բոլորը, ըստ Նժդեհի, «*բանականութեան ու բարոյականի կողմից ժխտուած*» են, իսկ իրենց առաջադրվող իշխանության ձևը՝ «*անիշխանացուցիչ ու ապականարար վարչաձեւ*» է,⁸⁵ որովհետև նրանց հիմքն են կազմում շահադիտությունն ու «*նիւթապաշտիկ մարքսականութիւնը*»⁸⁶ և դրանց հետևանքը - ազգասպան լենինականությունը:⁸⁷ Դրանք կոչված են արժեզրկել ցեղի ուժը ժողովրդների մեջ, որը նույնն է ինչ մարդու անձը սպանելը, նույնը, ինչ սպանել ողջ մարդկությանը, զրկելով այն ազգային առաքինությունների ծաղկեփնջից, որոնք բխում են Արարչի Ոգու հետ իրենց կապից, քանի որ նրանք մարդկային հոգին և ժողովուրդները տանում են դեպի լիովին դիմագրկում և հպատակություն մահկանացու մարմնին: Նրանց կործանիչ ազդեցության մասին, մասնավորապէս, հայ ժողովրդի վրա Նժդեհը գրում է հետևյալը.

«Օտար, փոխառիկ, կեղծ գաղափարները այլեւս պղտորել էին հայկական տոհմիկ, վճիտ — եւ իր խորքում՝ բարոյական — մտածողութիւնը: Այլեւս հայութիւնը մի եւ անբաժանելի չէ՛ր՝ մտքով արժէքապարտմով, կամքով: Այլեւս սկսուած էր ա զ գ ի ա պ ա զ գ ա յ ն ա ց ու մ ը — ազգաքանդութիւնը, մի բան, որ դեռ շարունակում է մեր ապրած օրերի եւ մեր ցեղի էաբանական խորքի հետ կապ չունեցող խմբակցութիւնների կողմից»:⁸⁸

Այդ «*ա պ ա զ գ ա յ ն ա ց ու մ ը*» առաջին հերթին արտահայտվեց տարբեր քաղաքական կուսակցությունների ձևավորման մեջ, որոնք ժողովրդին

բաժանեցին և բարոյապես փչացրեցին: «Հայր՝, - գրում է Նժդեհը, - դեռ անհայրենատեր, կուսակցականացաւ, հատուածականացաւ — մի պարագայ, որի պատճառով թերի մնաց Նազարեանների օրով սկսուած այնքան խոստմնայի իր վերածնունդը: Այդ իսկ պատճառով՝ հայութիւնը չկարողացաւ յաղթահարել իր ներքին տկարութիւնները — չկարողացաւ թարմանալ ցեղօրէն, վերանորոգուել, ամբողջանալ իբրեւ ազգ: Մրանով — բնաւ չանգիտանալով արտաքին պատճառները — նաե՛ւ սրանով պիտի բացատրել մեր ժողովրդի կրած թե՛ - աղէտները եւ թե՛ օրուայ անգոր ու անկար վիճակը»: ⁸⁹

Կուսակցությունները, ըստ Նժդեհի, նպաստում են միայն մարդու փոքր անձնական նկրտումների բավարարմանը: Նրանք «հասարակութեան մէջ փնտռում են տգէտը, միամիտը, չարարուեստը, եւ նրանց տկարութեան վրայ կառուցում իր հոգեւոր իշխանութիւնը», ⁹⁰ բարոյագրկելով այսպիսով ժողովուրդը, մինչ դեռ նա, ով ղեկավարվում է ցեղի հետաքրքրություններով (և ոչ թե կուսակցության), «իր ժողովրդի ծոցի մէջ փնտռում է հայօրէն եւ մարդկօրէն անշահասէրն ու առաքինին, եւ նրանց վստահում ազգի գործը, դատը, ճակատագիրը»: ⁹¹

Նժդեհը նաև նշում է, որ «հայութիւնը՝ դատարկուելով ցեղային իրականութիւնից, կը դառնար վայրկեանի արտաքին շահերով ապրող ժողովուրդ՝ աստակ իր ապրած աղէտներին, եւ արժանի օրուայ իր ճակատագրին»: ⁹²

Բացի դրանից, «Երբ չկայ ցեղի գիտակցութիւնը, կայ ժողովրդի ստորարժէքութեան եւ տկարութեան գիտակցութիւնը,- այդ գիտակցութեան դառնութիւնը: Յեղով կ'ապրի, կը ստեղծագործէ, կը յաւերժանայ ժողովուրդը: Արդ, թէ ինչո՛ւ ցեղային անհատականութեան եղծումը ցեղակրօնը կը համարէ ոճիր՝ ուղղուած մարդկութեան, եւ, ի մասնաւորի, իր ժողովրդի դէմ: Յեղակրօնը կը խորշի այն բոլոր հոսանքներէն եւ վարդապետութիւններէն, որոնք կը միտին մեր նորահաս սերունդը հեռու պահել ցեղի կազդորիչ ստիւնքէն — կաթէն»: ⁹³

Այնպէս որ, ըստ Նժդեհի խորը համոզմունքի, արիական ոգու, կամ ցեղային գիտակցման բացակայությունը դարձնում է ժողովրդները եսասերների ամբոխներ, և ոչ թե ազգեր: «Նման չարարուեստ էակներից շողախուած մի ցածոցի ամբոխ, - գրում է նա, - դարեր առաջ, արդարն Արիստիդէսին - իր ծայրահեղ ազնուութեան համար - հայրենի հողէն ու ջրէն օգտուելու իրաւունքից զրկեց. դա սպանեց Սոկրատէսին, եւ, աւագակների հետ՝ խաչ հանեց Նազովրեցուն»: ⁹⁴ «Նման մի ամբոխ մի օր քեմալական չետաներին յանձնեց մեր Ղարսը»: ⁹⁵

Այդ պատճառով Նժդեհը Հայաստանի համար միակ փրկությունը համարում է վերադարձը դեպի արիության. «Արիութիւն, - ասում է նա, — յետ այսու սա՛ պիտի լինի հայ մարդու կոչումը»: ⁹⁶ Եվ ոչ միայն կոչումը, - այլև նրա պաշտամունքը, նրա կրոնը, այլ կերպ ասած, արիական ցեղային ոգու վերածնունդն հայի մէջ:

Կրոնի գաղափարը Նժդեհը կապում է քրիստոնեության հետ և սահմանում է որպես մարդ գաղափարի հոգևոր բաղադրիչ: «Ո՛վ հեռանում է կրօնից՝, - գրում է նա, - անձնասպանօրէն կտրում է իր հոգեւոր զարկերակը: Իր արարչի դէմ գործողը պիտի չքաշուի գործել եւ իր նմանների դէմ: Կրօնը — իմաստասիրօրէն առնուած — միայն արարածի եւ Արարչի յարաբերութիւն չէ՛, այլ եւ՝ մարդու եւ մարդու, անհատի եւ հաւաքականութեան, անձի եւ ճշմարտութեան յարաբերութիւն»: ⁹⁷

Հետևաբար, Նժդեհը իսկապես կրօնաշունչ մարդ է համարում նրան, ով «ընդհանրապէս, կեանքի մասին իդէալիստական ըմբռնում (ունի): (Նրան), ո՛վ ընդունում է Աստուծոյ գոյութիւնը՝ ընդունում է նաեւ իր պարտականութիւնը հանդէպ գերագոյն իրականութեանց — ազգ, հայրենիք, պետութիւն: Ուզո՞ւմ էք խորապէս ճանաչել մէկին՝ - ասում է նա, - խօսէ՛ք եւ խօսեցրէ՛ք նրան Աստուծոյ մասին, եւ նա իր պաշտանքի կամ անհաւատութեան միջոցաւ պիտի մատնէ իր հոգեւոր հասակը: Անաստուած՝ ես, ասել է՝ զուրկ ես սրբութեան նուիրումից, պարտականութեան զգացումից. ասել է՝ վաղ թէ ուշ դու պիտի դաւաճանես նմաններիդ: (...) Մարդկութեան թշնամի է ամէն «գիտնական», որ թուրքակում է «գիտութիւնը ո՛չ կրօն ունի, ո՛չ էլ հայրենիք»: Մեր Երկրագնդի վրայ անհայրենիք, անցեղ եւ անաստուած է մարդկային տկարութիւնը, ստորութիւնը միայն»: ⁹⁸

Իսկ իրականում, - շարունակում է նա, - «Գիտութիւն, կրօն՝ սրանք թշնամիներ չեն, այլ՝ զինակիցներ, որոնցից մէկը գործում է մտքի, միւսը՝ սրտի միջոցով: Չարութիւն է շնչում ամէն անկրօն: Մարդկային անհատը միայն ա՛յն չափով է ընկերային, ինչ չափով որ դա կրօնաշունչ է: Կրօնապէս տկարացա՞ւ մարդկութիւնը — եւ ահա՛ այլեւս երկինք չունի նա. փլաւ նրա յոյսերի աշխարհը. այսօր այնտեղ էլ մահն է գործում իր դէմ»: ⁹⁹

Կրօնը, ըստ Նժդեհի, « դա ծնունդ է աստվածութիւնի ծարավի մարդկային հոգու», մինչ դեռ «**ցեղակրօնութիւնը՝** հայրենիքի համար ամէն վայրկեան արհնող հայկական սրտի»: ¹⁰⁰

Ելնելով դրանից՝ կրոնական իմաստով թուլությունը, նա բացատրում է որպես իր ցեղի զգացման կորստի հետևանք, որի խորությունը, ինչպես տեսանք, համարում է կրոնական, որովհետև «Յեղը, որ էաբանական կորիզ ունի, եւ մշտատեւ պայքարի մէջ է ժամանակի հետ, բնագործէն ձգտում է անեղծութեան եւ մահայաթափարումի: Ահա՛ թէ ինչո՞ւ նա կրօնական խորք ունի»: ¹⁰¹

Յեղակրոնը, ըստ Նժդեհի, կոչված է ապահովել հենց հավատարմությունն այդ «էաբանական կորիզին», կամ «հաւատարմութիւնը մեր սեփական էութեանը», ¹⁰² քանզի *ցեղակրոնի* հիմքն է կազմում նմանների հանդէպ բարոյական վերաբերմունքը:

Ասես թե կրկնելով հայտնի ավետարանի ուխտը՝ - **«Ամեն ինչ որ կամենում էք՝ թե՛ ձեզ անեն մարդիկ, այնպես էլ դուք արեք նորանց. Որովհետեւ այս է օրենքը եւ մարգարէները»:** (Մաթ 7: 12) – Նժդեհը ասում է.

*«Այրելու եւ անկաշկանդ կատարելագործուելու իմ բնական իրաւունքը պայմանաւորում է իմ սեփական պարտականութեամբ՝ յարգելու նմաններիս նոյն իրաւունքը: Հաւասարապէս հակաընկերային են այն անհատներն ու ընկերային խաւերը, որոնք ասում են իրենց մասին՝ «ես ամէն ինչ եմ» կամ՝ «ես ոչինչ եմ»: Ազգերի կեանքում միայն մեծ ամբողջն է «ամէն ինչ», եւ ո՛չ ոք իրաւունք ունի լինելու «ոչինչ»: Ո՛չ թէ սոցիալիստը, այլ՝ սոցիալական անհատը — ահա՛ նոր բարոյականութիւնը, որով լուծուում է ընկերային խնդիրը եւ վերջ տրուում ժողովուրդների ներքին իրերակերութեան»:*¹⁰³

Իսկապէս, Աստվածաստեղծ հոգի ունեցող մարդը չի կարող լինել «ոչինչ», քանի որ յուրաքանչյուր հոգի պարունակում է իր մեջ որոշակի մի միտք, մտադրություն, աշխարհ, ինչն յուրաքանչյուր անձին ու յուրաքանչյուր ժողովուրդին գաղափարապէս ազատ և անկախ է դարձնում իրենց զարգացման մեջ և ուրիշների հետ կապված միայն իրենց Աստծո, մարդկության, ժողովրդի, ընտանիքի հետ միասնության գիտակցությունով՝ անկախ իրենց հասարակության կամ մարդկության մեջ զբաղեցրած դիրքից: Հատկապէս ընդգծելով վերջինը՝ Նժդեհը ասում է, որ *«Ազգային բարոյականի տեսակէտից՝ մի Գիւլբենկեան աւելի չարժէ, քան՝ Հայաստանի մի գեղջուկ, եւ մի զօրավար, մի ուսուցչապետ, քան՝ մի համեստ արհեստաւոր»:*¹⁰⁴

Անձի նկատմամբ նման վերաբերմունքը կարող է հիմնված լինել միայն ժողովրդի ներկայացուցիչների բացարձակ հոգևոր անկախության վրա:

*«Կը բարձրանան, կը յաղթեն ու կ'ապրեն ժողովուրդները, - ասում է Նժդեհը, - երբ նրանց մէջ տիրաբար կ'իշխէ բացարձակ անկախութեան ոգին, բայց ազգասիրութիւնը, երբ անհատը, խմբակցութիւնը, դասակարգը Հայրենիքի եւ ընդհանրութեան շահը կը գերադասի անձնականից, երբ մեծամասնութիւնն իրեն աւելի պարտականութեանց տէր կը զգայ, քան իրաւունքների, եւ երբ այդ մեծամասնութեան մէջ կը զգացուի անձնավստահութիւնն եւ անշէջ հաւատը դէպի իր ապագան»:*¹⁰⁵

Պարզ է, որ Նժդեհի նման հայտարարությունը հիմնված է այն գաղափարի վրա, որ պարտավորությունների կատարումն է, որ ապահովում է իրավունքների պահպանումը:

Բայց դա հնարավոր է միայն այն դեպքում, երբ ժողովրդի վրա ցեղի ոգին է իշխում: Ըստ այդմ՝ Նժդեհի ցեղակրոնի ամենակարևոր պահանջներից մեկն է նաև ցեղի իշխանությունը նյութի վրա: Ինչպես արդեն նշվեց, ըստ Նժդեհի, *«Ընդունել ցեղի գերագահութիւնը ժողովրդի վրայ նշանակում է՝ ընդունել յաւիտենականի գերագահութիւնը առօրեայի, ոգուն՝ նիւթի վրայ»:*¹⁰⁶

*«Հայր պիտի դաւանի <հոգու> առաջնութիւնը նիւթի նկատմամբ»:*¹⁰⁷ - պնդում է Նժդեհը, քանզի դա է գլխավոր էությունը նրա հնագույն ցեղակրոնի, որը հորինված չէ Նժդեհի կողմից, այլ, ինչպէս արդեն ասվեց, հիմնված է *հայի խորին*

էական արիական մտածողության վրա,¹⁰⁸ նրա պատրաստականության վրա հանուն բարձր գաղափարի զոհաբերել նույնիսկ իր ժամանակավոր կյանքը: Իսկ դա, ըստ Նժդեհի, կարող է անել միայն ոգու մարդը.

«Հայրենիքի համար ապրում եւ մեռնում է ոգո՛ւ մարդը, միա՛յն նմանը»,¹⁰⁹ - ասում է նա, նկատի ունենալով նրան, ով առաջնորդվում է ոչ թե մահացու մարմնի պահանջներով, այլ հոգու և ոգու պահանջներով և այդ պատճառով պատրաստ է հարկավորության դեպքում անտեսել նույնիսկ մարմնային տանջանքներն ու մահը: Նրանց, ովքեր ընդունակ են այդպիսի սխրանքի, Նժդեհը բաժանում է կրավորական և եռանդուն հերոսների:

«Մարտիրոսանալու կամքը եղել է եւ կը մնայ հոգու գերագոյն հերոսականութիւնը, - գրում է նա, փաստորեն, կրկնելով ավետարանի խոսքն հանուն բարձր գաղափարի տառապանքի մասին: - *Կրաւորական հերոս,- ահա՛ թէ ով է մարտիրոսը, որ արհամարհել գիտէ մահը(...)*էականն կեանքն արհամարհել եւ մահուան երեսին ժպտալ գիտենալ(ը)»,¹¹⁰ ինչպես դա անում էին առաջին քրիստոնյաները, որ մահվան էին ենթարկվում իրենց ընդունաց կրոնի պատճառով, նաև նրանք, ովքեր նույնիսկ ի դեմս թուրքական յաթագանի, որ հնձում էր իրենց, ամուր մնացին ցեղի հավատքին և ինքներն իրենց չղավաճանեցին: Նրանցից շատերը Հիսուս Քրիստոսի նման խաչվեցին թուրքերի կողմից և հետո խաչերի հետ միասին նետվեցին ծովը:

Մինչդեռ *ակտիվ, եռանդուն* հերոսը նա է, որ իր կյանքն զոհաբերում է մարտադաշտում, ինչպես դա արեցին մամիկոնյանցիները և շատ այլ հայոց պատմության հերոսներ: Ձոհաբերելու հենց այդ ունակությունով է չափում Նժդեհը արիական ոգու ներկայությունը մարդու մեջ:

«Կա՛յ այդ կամքը, - ասում է նա, — *ասել է՝ ենթական յաջողել է հաշտեցնել իր անձը իր ցեղի յաւիտենականի հետ. ասել է՝ նա այլեւս գտած է ինքն իրեն, այլեւս ինքնաճանաչ է, որով եւ՝ տէր իր ցեղի թաքուն ոյժերին: Ճշմարտութեան ու հերոսական բարոյականի մարդ՝ նա այլեւս ճշդած է իր վերաբերմունքը դէպի իր անձը, դէպի իր նմանները, դէպի ճշմարտութիւնը: Նմանների հայեացքը միշտ էլ ուղղուած է դէպի յաւիտենականը. այլեւս նմաններին չէ խոռվում կեանքի մանրուքը: Իբրեւ ռազմիկ՝ անպարտելի են նմանները: Նմանների հայրենիքում զինուորը կարող է մեռնել, բայց ո՛չ եւ պարտւել: Այսպէս էին Մամիկոնեանները»:*

111

Այդ կապակցությամբ նախանշելով թշնամու հետ պատերազմում հաղթանակի ճանապարհը, Նժդեհը ասում է.

«*Զինուորական բարոյականը չէ ասում՝ յաղթանակի՛ր բոլոր դէպքերում, դա ասում է՝ յաղթականօրէն մեռնել զիտցի՛ր բոլոր պայմաններում: Զէնք, դիրք, քաղաքական վայրկեան — այդ բոլորը կը նպաստեն քո յաղթանակին՝ կը բաւէ, որ դու մեռնելու կամք ունենաս, այսինքն՝ անձէդ աւելի սիրես այն, որի համար կուի ես դուրս եկել: Հերոս է նա, որի համար կեանքն արդարացում ունի, երբ դա ապրո՛ւմ է ո՛չ թէ իբրեւ նպատակ, այլ իբրեւ մի սրբազան բանի ծառայեցնելու կամ զոհելու միջոց»:*¹¹²

Ինքնագոհության այդպիսի պատրաստակամությունը, որպես հայկական ցեղի բնութագրական առանձնահատկություն, Նժդեհը «Տարոնականություն» է անվանում Տարոն գավառի անունով, որտեղից էին Մամիկոնյանցի հերոսները:

«Տարոնականութիւնն է մեր ցեղային նկարագրի յաղթական գիծը, - գրում է Նժդեհը: - Տարոնականութիւնն ասել է՝ Մամիկոնեանների ճամբով, դա ասել է՝ ցեղի եւ Հայրենիքի համար Մամիկոնեանների պէս մեռնել ուզել ու մեռնել գիտենալ»:¹¹³

Ճիշտ այդպիսի կամքի մեջ է, ըստ Նժդեհի, մեկը յոթին յաղթանակելու հայ ժողովրդի գախսնիքը:

«Աճապարենք հարցնել, - գրում է Նժդեհը, - թէ ինչո՞ւն է մեկը՝ եօթին, հարիւրը հազարին յաղթելու գաղտնիքը: — Դա պէտք է փնտռել յաղթականի ռազմական, **անձնուէր ոգու մեջ**: Յաղթութիւնը ժպտում է ռազմիկին, որ գիտէ աներկիւղ աչք աչքի գալ մահուան հետ: Յաղթութիւնը ժպտում է նրան, ով գիտէ ժպտադէմ մեռնելու աստուածային գաղտնիքը»:¹¹⁴

Վկայելով ցեղակրոնի քրիստոնեական արմատների մասին՝ Նժդեհն կարծես թե հրավիրում է հայերին ավետարանի ճշմարտությունները ուսումնասիրելու. «**Նոր ավետարանի խօսքը պիտի լսի հայութիւնը**»,¹¹⁵ ասում է նա նորի տակ նկատի ունենալով իրենց պաշտպանելու կարողությունը:

«Հոգեկան ուրախ տրամադրութիւն՝ քրիստոնէական կրօնի հիմքերից մէկն է դա, — ասել է անգլիացի մի աստուածաբան: Բանակների յաջողութեան մայրն է դա, յաղթութեան դայեակը, — աւելացնենք մենք»:¹¹⁶

Այսպիսով, վկայակոչելով անգլիացի աստվածաբանի խոսքը, նա ապա իր կողմից ավելացնում է, որ հոգու ճիշտ այդպիսի տրամադրությունն է, որ տանում է բանակները հաջողության: Իսկ դա - Հին Կտակարանի միջով անցնող հիմնական գաղափարներից մեկն է, մասնավորապես, այն գաղափարը, որ Աստծո Ոգով առաջնորդվողը, պատերազմում պարտություն չգիտի:

Բայց որպեսզի Աստծո, կամ արիական Ոգին չլքի մարդուն, ժողովրդին, նրանք նախ և առաջ պէտք է հաղթահարեն իրենց մեջ իրենց ժամանակավոր կյանքի համար դողացող մահկանացու մարմնի ոգին, այսինքն՝ ազատագրվեն իրենց դատապարտվածության և մահվան ստրկության զգացումից:

«Մա՛րդն է իր յաղթութիւնների եւ պարտութիւնների պատճառը, - գրում է Նժդեհը: - Եւ յաղթում է նա, որն արդէն յաղթել է իր կենդանական բնագոյրը, իր ետը, իր վախը, երբ արդէն յաղթել է ինքն իրեն: Պարտում է նա, որ արդէն պարտուած է ինքն իրենից, իր վախից, իր բնագոյից, իր եսից»:¹¹⁷

Այսպիսով, իր ցեղակրոնը Նժդեհը, ըստ էության, նույնացնում է «Տարոնականության» հետ, այսինքն պատրաստակամությամբ իրենց կյանքը գոհաբերելու՝ հանուն ցեղի կյանքի և հավատքի պահպանման:

«Տարոնականութեան — ցեղի յաւիտենական այդ զէնքին ենք դիմում, - գրում է Նժդեհը, - որովհետեւ այլեւս աշխարհը մեզ համոզեց, որ ներկայ պայմաններում վտանգի, հերոսականի ու մահուան մարդը միայն կարող է **Հայաստանը ապրեցնել**»:¹¹⁸

Հետևելով Փրկչի մեզ տված դասին՝ Նժդեհը տառապանքն անվանում է «կարեւոր եւ անհրաժեշտ բաժինն (...) մեր գոյության» և ընդհանրապես, «մարդկ[ային] մեծության», իսկ «նա, որ ճգնում է հեռացնելու դա՛ սպանում է մարդկային բնության ամենաազնիվ կողմը»:¹¹⁹

Պատասխանելով նրանց, ովքեր չեն հավատում տառապանքի ազնվացնող հատկությանը՝ Նժդեհը ասում է. «Ո՛չ, ո՛չ, սուտ չէ, կեղծ չէ տառապանքի ազնուացուցիչ յատկությունը մարդու եւ մարդկային ազգի համար: Կա՛մ մարդ ենք՝ ընդունակ տառապելու եւ ազնուանալու, կամ անասուն»:¹²⁰

Տառապանքի միջոցով է բացահայտվում մարդու, ժողովրդի, մարդկության կյանքի համար անհրաժեշտ իրենց անձնական և հավաքական հոգու որակը, քանզի տառապանքը՝ հոգու կենսունակության քննությունն է բառի բարձրագույն իմաստով:¹²¹ Ինչպես ասում է Նժդեհը, որքան էլ «գեղեցիկ է դափնիով պսակուած ճակատը. սրբազնագոյնն ու համբուրելին, սակայն, կը մնայ ճշմարտութեան համար փշերով պսակուածը»,¹²² քանզի «աւելի հեշտ է արդար լինել, քան՝ ամէն գնով արդարութիւնը պաշտպանել: Արդար կարող է լինել անգամ ամենախեղճ մարդը: Արդարութիւնը, սակայն, պաշտպանելու համար պէտք է լինել ո՛չ միայն արդար, այլ եւ՝ տղամարդ, եօթնի ցս տղամարդ»:

¹²³

Խոսելով տարապանքի դերի մասին՝ Նժդեհը գրում է նաև, որ «Բարձրորէն հոգեւոր կեանքի սկզբունքը հակասութեան սկզբունք է: Պէ՛տք էր մի յուդա, մարդկային մի սեւ չարութիւն, մի ուրացում, որպէսզի իրենց գերագոյն ողբերգութեան մէջ յաղթանակէին Նազովրեցին ու բարութիւնը»:¹²⁴

Խաչերի վրա խաչված Հայաստանը նույն Գողգոթան է Նժդեհի համար, որտեղ Աստծո հետ միասին խաչվեց և Նրա խոսքն ընդունած ժողովուրդը: Վերջինիս բաժանված երկիրը նա համեմատում է Քրիստոսի հագուստի հետ, որը Իր դահիճները իրենց մեջ բաժանեցին,¹²⁵ մինչդեռ նրա ամբողջ հետագա պատմությունը, երբ, ինչպես ասում է, «Աշխարհի ամենէն անիծապարտ բռնապետութեան արնոտ ձեռքով կը խաչուէր հայ ժողովուրդը (Գողգոթայէն...»,¹²⁶ նա նմանեցնում է «փշեպսակի», որը, սակայն, համարում է միաժամանակ նրա «փրկութեան գրաւականը»:¹²⁷

Ինչպես փրկարար էր Քրիստոսի տարապանքը Իր առաքյալների համար, այնպես էլ, ըստ Նժդեհի, փրկարար եղավ Հայաստանի տարապանքը հայերի համար: Նա նույնիսկ սահմանում է «տարապանքը որպէս միջոց մեր հաւաքական վերածնունդի եւ քաղաքական փրկութեան»:¹²⁸

Հայաստանի ճակատագիրը համեմատելով Քրիստոսի երկրային ճակատագրի հետ՝ Նժդեհը այսպես է գրում հայի տարապանքներին աշխարհի արձագանքի մասին, - այն աշխարհի, որ կարծես թե ասում էր հային.

«Կա՛խ է գլուխդ, խոնա՛րի է ճակատդ, բռնութեան լծի տակ երկտակուա՛ծ է մէջքդ, պատուիդ տէրը չե՛ս, ցեղիդ սրբազան լեզուէն օգտուելու իրաւունքն իսկ չունե՛ս, վաղո՛ւց է ինչ եկեղեցիներիդ զանգերի քաղցր ղողանջը չես լսում, առանց իտէալի եւ վեհութեան կը սողա ս միայն – ստրո՛ւկ ես՝ դու ես մեղաւոր, դու.

Ի՞նչը մղեց քեզ միամտորեն հաւատալու ցնորապաշտ Նազովրեցու վսեմ, բայց վտանգաւոր խօսքին: Ո՞վ ասաց, որ թոյլը մեղաւոր չէ, որ թոյլ է, եւ որ ուժեղը երախտիք չունի, որ ուժեղ է: Դու խաբուած ես, ժողովուրդ, որ զոհն ես քրիստոնէական բարոյախօսութեան, որ շարունակում է մնալ որպէս ներկ եւ շպար, որպէս քօղ եւ դիմակ ուժեղների հոգու համար: Թուլութիւնը,- ասում է աշխարհը,- ծնուած է սնուցանելու ուժը: Ուժն է ծնում իրաւունքը: Ուժեղին է աշխարհը, հայրենիքը, ազատութիւնը եւ ամէն ինչ:

- Ուզո՞ւմ ես վերջ տալ գերմարդկային տառապանքիդ, որի Շէյքսպիրը դեռ չէ յայտնուել: Ուզո՞ւմ ես վերջ տալ գողգոթայիդ, որի վրայ որպէս յոյսի ժողովուրդ, կը մեռնես ամէն օր եւ չես մեռնի: Ուզո՞ւմ ես փրկուիլ,- եղիր ուժեղ, քանզի թոյլերը բարեկամ չունեն աշխարհում: Իսկ ուժիդ ապացոյցը տալու համար, ցոյց տուր երկու բան.- առաջինը, որ գիտես մեռնել գիտակցօրէն, կուուս գործօն եւ իմաստալի մահով, երկրորդը՝ որ գիտես մեռցնել: Ապացուցեցի՞ր այդ, ունեցա՞ր այդ երկու առաքինութիւնները, մասնաւորապէս առաջինը՝ փրկուած ես: Այս էր աշխարհը հայկական գողգոթայի հանդէպ:

Այսպէս կը պատասխանէր մարդկութիւնը մահուան դատապարտուած այս ժողովուրդին, որը չէր ուզէր մեռնիլ, բայց չէր կարող եւ ապրել:»¹²⁹

Բացահայտելով աշխարհի հակաքրիստոնէական դեմքը հենց քրիստոնէական ոգու հետ նրա պայքարի տեսանկյունից՝ նա նշում էր.

«Քսան երկար ու ձիգ դարեր են անցել Գողգոթայից մինչեւ մեր օրերը, եւ, աւա՛յ, խաղաղութեան, եղբայրութեան ու սիրոյ Ուսուցչի աստուածաշունչ խօսքը շարունակում է մնալ որպէս «ձայն բարբառոյ յանապատի»,¹³⁰ իսկ աշխարհի պատմութիւնը՝ նույնպէս շարունակում է մնալ «Երկու հակամարտ ոյժերի արնոտ պատմութիւն – սրի եւ սիրոյ խօսքի պայքար – երկու ոյժեր, որոնցից մէկը երազում է վերացնել սահմանները երկրների եւ ժողովուրդների միջից, իսկ միւսը յամառում է հաստատ պահել այդ սահմանները, ասել է եւ ազգամիջեան թշնամանքը՝ իր գոյութիւնը յաւերժացնելու համար: Եւ դեռ իշխում է վերջինը, դեռ ուժեղ ու յաղթական է վերջինը ու յոյս չկայ թէ մեր դարում սուրը կը վերածւի արօրի»:»¹³¹

Հասկանալի է, որ խոսելով այս երկու ուժերի մասին՝ Նժդեհը նկատի ունի Հիսուս Քրիստոսին՝ որպէս Սիրո Խոսք և Նրա հակառակորդին - այս աշխարհի Իշխանին՝ - որպէս սուր: Եվ չնայած այս հակադրությանը՝ Նժդեհը սուր է բարձրացնում իր ժողովրդին ֆիզիկական և հոգևոր ոչնչացումից պաշտպանելու համար՝ «համադրելով քրիստոնէությունն ու ազգությունը», - այնպէս, ինչպէս, ըստ իրեն, դա արեցին Մամիկոնեանները, «որոնց բարոյականը այնքա՛ն պահանջկոտ էր մարտնչող հայ անհատի հանդէպ, որոնց համար աշխարհը շուկա չէր, այլ քաջագործութիւնների ասպարէզ, որոնք գիտէին կեանքին արժէք չտալ գիտցան **համադրել քրիստոնէությունն ու ազգությունը**: Սրանով պէտք է բացատրել սրբազանի այն խոր զգացումը, որ դարերով իրենց անգերազանցելի հերոսութեան մայրը հանդիսացաւ: «Առանց Վարդանի եւ Մամիկոնեանց՝

կարելի չէր երբեք, որ Հայաստան փրկուի»,- ասում է Հայոց պատմությունը՝ մի ճշմարտություն, որ ամենայն վճռականությամբ կարելի է կրկնել եւ ա՛յսօր»։¹³²

Եզրակացությունը, որ Նժդեհը անում է, հետևյալն է. այս աշխարհում գոյատևելու համար պետք է ուժեղ լինել: Բայց ուժը նա հասկանում է նախևառաջ, որպես բարոյական, քրիստոնեական ոգու ուժ, որը ծագում է բոլոր ճնշվածներին պաշտպանելու ձգտումից, ինչը, ինչպես արդեն ասվել է, հայ Հայկիդների ժառանգական ոգին է, որը կարող է հաղթահարել մարմնական ոգուն: Այդպիսիների մասին Նժդեհը ասում է. «Յաղթանակում է նա, ով իր մէջ բնութիւնը Ոգուն ենթարկելու աստիճան գորաւոր է»: ¹³³ Այդ ուժը կայանում է տառապելու կամ իր կյանքը հանուն հայրենիքի ազատագրման և բարգավաճման զոհաբերելու պատրաստակամության մեջ: Այդ պատճառով, հայրենիքի փրկության համար առաջիկա պատերազմները Նժդեհը անվանում է խաչակիր պատերազմներ:

«Մրանով կը յաղթես», - կրկնում է նա այն արտահայտությունը, որ, ըստ առասպելի, Կոստանդին Մեծը տեսել էր խաչի կողքին գրված Հռոմեական կայսր Մաքսենտիոսի հետ իր ճակատամարտից առաջ, ապա այդպիսի հաղթանակի օրինակ է բերում հայ ժողովրդի պատմության ամենափառահեղ էջից, այսինքն՝ Վարդան Մամիկոնյանի հաղթանակի օրինակը, ով իր փոքր բանակի հետ, չնայած և իր ու իր մարտիկների կյանքի գնով, կարողացավ իր ցեղի կրոնը պաշտպանել փղերի հետ առաջացող հսկայական պարսկական բանակից, որ մտադրված էր ստիպել հայերին հրաժարվել իրենց կրոնից և ընդունել պարսկականը: Անհավասար արյունալի պատերազմի արդյունքում, որում հերոսաբար ընկան բոլոր մամիկոնյանցիները, պարսկական բանակի կորուստները, այնուամենայնիվ, շատ ավելին էին, քան հայերի կորուստները, և, ստիպված լինելով նահանջել՝ պարսիկները այլևս երբեք չփորձեցին իրենց աշխարհայացքն ու կրոնը պարտադրել հայերին:

Իր գլխավորած խաչակիր պատերազմը Սյունիքի համար Նժդեհը սկսեց՝ մարտիկների ուշադրությունը հրավիրելով Մուհամմեդականների կողմից պղծված Սյունիքի հնագույն հայկական հուշարձանների վրա, - «*հինաւորց վանքերով ու բերդերով՝ կիսաւեր ու փլատակ սրբավայրեր(ի), որոնք դարեր շարունակ թուրքի համար ախոռի եւ դարմանանոցի տեղ կը ծառայէին*»: Ինչպես ինքն է ասում, «*Այս պարագան, որն իմ ուշադրութիւնը գրաւել էր Սիւնիք մտածս հէնց առաջին օրերից, ինձ հնարաւորութիւն ընձեռեց իմ վարած ռազմագործողութիւններին տալ Խաչակրաց արշաւանքի բնոյթ*»: «Մրանով կը յաղթես», ասաց նա իր զինվորին, նկատի ունենալով քրիստոնեական խաչը, և այսպիսով զարթնեցրեց նրա մեջ ցեղի ոգին: - Եվ իր զինվորը, ըստ իրեն իսկ խոսքերի, «*սրբագան դողով կը նայէր հեքեայթական Գեղուաձորի դուռը փակող Բաղաբերդին, երբ նրա ճակատը կը խոնարհուէր եւ շրթունքները կը շօշափէին իր փլատակների մէջ այնքա՛ն վեհ բերդի քարերը: Իմ զինուորը չէր կարող այլևս անտարբեր անցնել իր երկրի պատմական յիշատակների մօտով: Եւ հէնց այդ թուլութեան մէջ էր նրա անպարտելի ոյժը: Եւ, այնուհետեւ թշնամու դիրքերի եւ*

*քանակի մասին հարցնելու փոխարեն, Միւնեցին կը հարցնէր հայկական եկեղեցիների եւ բերդերի մասին եւ առաջ կը խոյանար որպէս խաչակիր»:*¹³⁴

Այսպիսով, Նժդեհը հայ զինվորին առաջարկում է հաղթել թուրքին Հիսուսի Խաչով – այսինքն զոհաբերել իր կյանքը հանուն Հայրենիքի, նրա տրոբված քրիստոնեական սրբավայրերը վերականգնելու համար՝ ապավինելով Արարիչից բխող անմահական արիական ցեղային ոգուն, և ցույց տալով, որ ոգու ուժը ամենասարսափելի զենքն է թշնամիների դեմ, քանզի արիական ոգին այն ոգին է, որը չի պատկանում մահկանացու մարմնին, որը հավերժ է և որը հավերժական է դարձնում իրեն կրող անոթը, այսինքն՝ մարդու հոգին: Հավերժության գիտակցմամբ նա հարության է բերում նրան, որ ճնշված էր իր մահկանացու մարմնի մեջ, և հոգին զոհաբերում է ժամանակավորը հանուն հավերժականի, հանուն իր սիրո դէպի ժողովուրդը, ընտանիքը, մարդկությունը, - սիրո, որը բխում է արիական ոգուց կամ պարզապէս արտացոլում է նրա մեծ զոհաբերական սերը հանդէպ նրանց, ովքեր, լինելով իր կրողները՝ դառնում են այդ Ոգու կերպարն ու նմանությունը:

Դա նույն Աստծո Ոգին է, որով աստվածաշնչական հրեաները իրենցից ռազմական տեխնիկայով և թվով ավելի ուժեղ ժողովուրդներ էին հաղթում: Նույնպէս և հայ ժողովուրդը, որը, ըստ Նժդեհի, *«Թուական, թեքնիք, ընդհանրապէս նիւթական տեսակէտից (...) հասկանալի պատճառներով, երբեք չի կարող ուժեղ լինել իր հարեւաններից: Սակայն ոյժը՝ միայն նիւթական ազդակները չեն, այլ եւ մի ժողովրդի առաքինութիւնները:*

*Կայ հոգեբանական գերադասութիւնը, կայ բարոյական ոյժը – աշխարհի պէս հին, բայց միշտ էլ թարմ եւ հրաշագործ, որին տիրապետող ազգը քիչ անգամ է գլուխ ծռել իրենից նիւթապէս տասնապատիկ ուժեղ թշնամու առաջ»:*¹³⁵

Հետևաբար **ցեղակրոնի նպատակն է** հայերի մեջ վերականգնել հնագույն արիացուն – Աստծո որդուն - նույնն է. մեր ցեղի մարդուն, - և անել դա կրթելով նրա նոր սերունդը որպէս արիացի:

Բայց... ինչպէս ավստասանքով նկատում է Նժդեհը, *«Հայ մարդը, իմաստասիրական ջանքի պակասի պատճառով, «նոր սերունդ» հասկացողության մեջ դնում է միայն կենսաբանական բովանդակություն: Նորը, ըստ այդ վերջինի, որդիներն են, հինը՝ հայրերը»*, մինչ դեռ *«սերունդ — դա կենսաբանական հասկացողութիւն չէ՛, «կանաչ հասկ» չէ՛ միայն, այլ եւ՝ հոգեբանական որոշ բովանդակութիւն: Դա էութիւն է՝ հինէն խորապէս տարբեր»:*

¹³⁶

Վերջինիս տակ, բնականաբար, Նժդեհը հասկանում է նրա հոգևոր բաղադրիչը, այսինքն՝ հոգին, որի համար «կավը» միայն հագուստ է: Հետևաբար, Նժդեհի ցեղակրոնը առաջին հերթին պահանջում է պատերազմ հայտարարել այն

ամենին ժողովրդի մեջ, որը անարի է և ստիպում է նյութապաշտ լինել, - այսինքն պահանջում է պատերազմ հայտարարել մատերիալիզմին, նյութապաշտությանը, շահադիտությանը, էսասիրությանը և որակի ժողովուրդ դառնալ, ինչպիսին եղել է ժամանակին հայ ժողովուրդը: *«Որակի՛ ազգ էինք երէկ: Չաղէտուելու եւ չկորչելու համար՝ վերստին պիտի դառնանք այդպիսին՝ հրամայողաքա՛ր: Անվերջ որակաւորուելու, ազգ դառնալու պրոցեսի մէջ են բոլոր ժողովուրդները: Իբրեւ ոգու ժողովուրդ՝ մեզ համար աւելի հեշտ է որակաւորուել: Աշխատենք դառնալ «թանկարժէք քար», որպէսզի «ծանր կշռենք եւ շատ արժենք»: Դա՛ է պահանջում մեզանից ազգային բարոյականը, մասնաւորապէս մեր բնաշխարհից դուրս»:*¹³⁷

Նշելով *«թանկարժէք քարերը»*՝ Նժդեհը, ով իր մտքերով միշտ ելնում էր Սուրբ Աստվածաշնչից, այստեղ ակնհայտորեն ակնարկում է այն քարերը, որ դրվում են Երկնային Երուսաղեմի պատերի, դռների և հիմքերի մեջ: Ըստ երևույթին, Երկնային Երուսաղեմի կառուցվածքը համարելով նախանշան կամ օրինակ՝ նաև հայոց պետականության հիմքերի ստեղծման **«աստուածաշունչ որդիների նշխարների վրայ»**, նա գրում է.

*«Ողբերգօրէն երջանիկ 1918-ի ընթացքում հայութիւնն ունեցաւ իր քաղաքական Աւարայրը Արարատի ստորոտում: Իր դարաւոր նկուն եւ անփառունակ գոյութիւնից դժգոհ՝ մեր ցեղի ոգին իրեն տիրական ու մեծ զգալու կարիքից խթանուած՝ բարձրացրեց հայոց անկախ պետութեան շէնքը, որի գրանիտէ հիմքը դրուած կը մնայ **աստուածաշունչ որդիների նշխարների վրայ**»:*¹³⁸

Խոսելով *«աստուածաշունչ որդիների նշխարների»* մասին՝ Նժդեհը այդպիսով գուգահեռ գիծ է դնում առաքյալների, - որ, ըստ Հովհաննէս առաքյալի, կազմում են Երկնային Երուսաղեմի հոգևոր հիմքերը, - և հայ հերոսների միջև, որ իրենց կյանքը նվիրեցին վերածնվող Հայկական պետության հիմնադրման համար, որի նպատակների մեջ նա ցանկանում է տեսնել Վերին Երուսաղեմի նպատակները, քանի որ ի վերջո ոչ մի փտած բան չպետք է մնա մարդկության մեջ, որի վերջնական նպատակն է *«հասարակական արդարության»* հաստատումը *«աստվածային օրէնքի»* թագավորման միջոցով: *«Իսկ այնտեղ, ուր թագաւորում է **աստուածային օրէնքը**, այնտեղ, - ասում է Նժդեհը, - ընչազուրկին եւ անարիին փոխարինում է արի եւ անկարօտ քաղաքացին: Իսկ այնտեղ, ուր չկայ ընչազուրկը, անարին, վատը, այնտեղ չէ երեւում արտաքին թշնամին հրով եւ սրով, այնտեղ բարգաւաճում է եօթնիցս օրինուած, ապահով ու երջանիկ հայրենիքը»:*¹³⁹

Այդպիսի աշխարհում մարդկությունը կապրի ըստ *«մարդկային իդէալ վիճակի, երբ պատերազմը սպանած կը լինի պատերազմը, երբ կը դադարի պայքարը, տեղի տալով կատարելագործուած եւ հաւասարապէս յարգուած ժողովուրդների եղբայրութեան առջեւ»:*¹⁴⁰

Հետևաբար, այն թանկարժէք քարերը, որոնք խորհրդանշում են Երկնային Երուսաղեմի հիմքը, պատերն ու դարպասները, բարոյական նշանակություն

ունեն ցանկացած ազգի, այդ թվում նաև հայի համար, և ցեղակրոնի նպատակը այս կորցրած բարոյականությունն արթնացնելն է հայի մեջ:

«Յեղակրօնութիւնը այլ նպատակ չունի, - ասում է Նժդեհը, - քան տարագիր հայութեան մէջ արթնցնել ցեղը, ցեղայի՛նը, միաժամանակ՝ թարմացնելով իր պատմական յիշողութիւնը — զայն մի՛ եւ անբաժան ազգի վերածելու համար»,¹⁴¹— այլ կերպ ասած, մարդկանց բերել ինքնաճանաչման, իսկ, ըստ Նժդեհի, դա հնարավոր է միայն ժողովրդի պատմության ուսումնասիրության միջոցով:¹⁴²

«Ժողովուրդներն,- ասում է նա, - այն չափով են ազգ, ինչ չափով որ բիրեղացած եւ զօրաւոր է այդ ինքնագիտակցութիւնը: Չկայ՝ աւելի մեծ յանցանք, ուրացում, քան՝ իր սեփական պատմութեան անձանօթ լինելը: Նմանը զուրկ պատմական զգացումից եւ յիշողութիւնից — ազգ չէ՛»:¹⁴³

Այդ պատճառով Նժդեհը շեշտում է, որ այդպիսի «ազգային ինքնաճանաչությունը (սնվում է) **մեր պաշտամունքից դէպի այն ամէնը, ինչ որ գեղեցիկ է, վսեմ եւ հերոսական հայրենի պատմութեան մէջ**»:¹⁴⁴ Իսկ դա առաջին հերթին խաչն է (կրօնը հայերի), այբուբենը, որ միացրեց հայերին Քրիստոսի մեջ, և հայ հերոսներն են, որ Հայաստանի համար զոհաբերել են իրենց կյանքը:

«Փորձեցէք մի վայրկեան մոռացութեան տալ հայ խաչի, այբուբենի ու սրի հերոսներին, - գրում է Նժդեհը, - եւ էլ ոչինչ կը մնայ, որ իրաւունք տայ մեզ ազգ կոչուելու: Հոգեւոր անապատի կը վերածուի մեր կեանքը, պատմութիւնը: Դպրոց, եկեղեցի, ընտանիք կը կորցնեն իրենց բարոյական բովանդակութիւնն ու խարխիւր: Կը ցամքին ստեղծագործ ոգեւորութեան բոլոր աղբիւրները»:¹⁴⁵

Ուրեմն, հայ մտավորականությունը պետք է դառնա ցեղի մտավորականություն, այն է՝ հոգևոր վերնախավ, և ոչ դրամական կամ տիտղոսի, իսկ նոր մարդը, ում նա պետք է կրթի, նույնպես պետք է լինի ցեղի մարդ: Նա պետք է դառնա «նորին — ցեղորէն դիմորոշւած, երկուութիւնից, կեղծիքից, ստորութիւնից զերծ, բարոյապէս առողջ ու ամբողջական (մարդ)»: Հենց «այդ նոր մարդու համար է աշխատում, - ըստ Նժդեհի, - մերօրեայ պատմութիւնը»:¹⁴⁶

Այնպես որ, երկրի հոգևոր վերնախավը պետք է կենտրոնանա ցեղի բարոյական պահանջների վրա և, ըստ նրանց, դաստիարակի երիտասարդ սերունդները, քանի որ, ինչպես Նժդեհն է ասում, ցեղից բացի, այլ իսկական դաստիարակ չկա. «Յեղը — դա յաւիտենական քանդակագործն է, նոր սերունդը՝ կենդանի մարմարիոն նրա ձեռքում»:¹⁴⁷

Մի խոսքով, ցեղակրոնը կոչված է արթնացնել և պահպանել հավերժական արթնության մեջ ժողովրդի բարոյական էությունը, որը իր հերթին կոչված է մարդանման կենդանուց մարդ դաստիարակել: Այսինքն՝ «Յաղթահարել նիւթը — զրկել ժամանակն իր կապարից, ցաւն՝ իր սրութիւնից, լեարդ պատառոտող անգղին՝ իր ճիրաններից — ահա՛ գերագոյնն արւեստներից՝ մայրը բոլոր արւեստների, որոնց ծնունդ է տւել մարդը»,¹⁴⁸ քանզի դա կյանքի և մահվան հարց է ինչպես մարդու համար, այնպես էլ ժողովրդի և ամբողջ մարդկության համար:

Ուստի *ցեղակրոնի* գլխավոր պահանջը Նժդեհը ձևավորում է ինչպես. «*Կա՛մ վերանորոգուի՛ր, կա՛մ մեռի՛ր*»:¹⁴⁹

Եզրակացություն

Ամփոփելով ասվածը՝ կարելի է պնդել, որ Նժդեհի ցեղակրոնը իր բարոյական էությանը ոչ մի կապ չունի ոչ մի տեսակի հեթանոսության հետ, որը միշտ հիմնված է մարմնի շահերի վրա, ոչ հիտլերականության կամ ֆաշիզմի հետ, քանի որ Եթե Հիտլերը հասկանում էր արիականությունը որպես մեկ ժողովրդի ռասայական գերազանցություն, ապա Նժդեհը խոսում էր յուրաքանչյուր ռասայի կողմից իր արիական ծագման գիտակցման անհրաժեշտության մասին և կյանքի ըստ այդ գիտակցության; Եթե Հիտլերիզմը ձգտում էր մեկ ազգի գերիշխանությանը մյուսների նկատմամբ, ապա Նժդեհը խոսում էր վերածնած իրենց արիությունը իրավահավասար ազգերի ընկերակցության մասին: Եթե Հիտլերիզմը հիմնված էր ֆաշիզմի վրա, որը ենթադրում է մարդու ֆանատիկական պաշտամունքը իր ռասայի հանդեպ, որ շատ հեռու է իրական սիրուց, Նժդեհը խոսում է մոլեռանդությունից հեռու իրական սիրո մասին, որ կարող է գնահատել նաև այլ ազգերի առաքինությունները, քանի որ գտնում էր, որ նա, ով իսկապես սիրում է իր ժողովուրդը, սիրում է նաև ամբողջ մարդկությունը: Նույնիսկ ավելին. Նա ասում էր, որ «*Միայն ազգասէ՛րը կարող է սիրել է՛ւ մարդկությունը*»:¹⁵⁰

Այսպիսով, Նժդեհի բոլոր գաղափարները քրիստոնեական արմատներ ունեն, և, հետևաբար, նրա ցեղակրոնը նույն քրիստոնեական կրոնն է, միայն ծանրաբեռնված տարապող ժողովրդների պաշտպանության հիմնավորման որոնումով, և հատկապես հայ ժողովրդի, ում իր շրջապատը ամբողջական ոչնչացման առջև է դրել, և ոչ միայն ֆիզիկական, այլև հոգևոր և բարոյական, քանզի ժողովրդի գիտակցությունը ենթակելով նյութապաշտության, նա մարդու մեջ բարենպաստ հող է ստեղծում մահկանացի մարմնին բնորոշ բոլոր տեսակի արատների զարգացման համար:

Այդ պատճառով իր «*սրով ու գրչով*» պայքարի գլխավոր նպատակը Նժդեհը արձանագրեց ինչպես իրավունքի ու սրբության պաշտպանություն այն աշխարհում, որ ոտնատակել է ամեն մի սրբություն:

«*Մուր եւ գրիչ, - ասում է նա, — աստուածայի՛ն զենքեր, տրւած մարդուն՝ պաշտպանելու իրաւունքն ու սրբութիւնն աշխարհում — իմ ձեռքում էլ յաճախ փոխարինեցին իրար*»,¹⁵¹ ընդ որում, ինչպես դա երևում է նրա բոլոր գրքույքներից և հոդվածներից, սուրբ նա օգտագործեց միմիայն նրան վերջնականապես ոչնչացնելու նպատակով, այսինքն «սուրբ սրով ոտնահարելու» համար:

Բայց ծանոթ լինելով Փրկչի խոսքին սրի մասին, նա ներողություն է խնդրում Աստծուց, չգտնելով ուրիշ հնարավորություն պաշտպանելու իր ժողովուրդը

լիակատար ոչնչացումից: Այդ պաշտպանության խնդիրը իր վրա վերցրած խաչ համարելով՝ նա գրում է. «*Ամենասրբազանը խաչերից, միաժամանակ էլ ամենածանրը — դա ճակատագիրն է հարազատ ժողովրդի: Այն կրողին է՛լ վա՛յ, է՛լ պատի՛ւ եօթնիցս*»:¹⁵²

Նա այդպես ասած, որովհետև իր Աստծու նման, նա էլ էր տարապում «*մարդկային ամեն մի կաթիլ արցունքի, անազատ ազգերի ամեն մի հառաչանք(ով)*»:¹⁵³

Դա նա ապացուցեց ոչ միայն պայքարելով Հայաստանի համար, այլ նաև Բուլղարիայի համար, որը նույնպես տարապում էր թուրքական լծի տակ և կարծես թե գոռում էր մարդկության երեսին, ասելով. «*Ոչ ոքի ի վնաս, իմ էլ մարդկության երջանկության համար անկախ ապրիլ կ՛ուզեմ*»:¹⁵⁴

Արդեն այս վերջին խոսքերը վկայում են, որ յուրաքանչյուր ժողովրդի երջանկությունը Նժդեհը կապուն էր ողջ մարդկության երջանկության հետ: Խորապես գիտակցելով ազգերի այս տիեզերական կապը՝ նա, հետևելով իր Տեր Հիսուս Քրիստոսին, ասում էր.

«Ես ընկերն եմ անհրաժուածի, եղբայրը՝ հալածւողի, եւ զինակիցը՝ բռնեռէ բռնեռ ւաւելի արդար աշխարհի համար մարտնչողների: Դաւանանքս է — մարդկայնութի՛ւն, աւելի՛ մարդկայնութիւն: Ոգու մարդ եմ»:¹⁵⁵

Իր ոգու մարդ լինելը նա շեշտում է աշխարհի ֆոնի վրա և միաժամանակ հակառակ նույն աշխարհի, որ խրված էր (և է) նյութապաշտության և պատերազմների մեջ,՝ գիտակցելով, որ իրականում աշխարհը թաքնված պատերազմ է տանում իր Արարչի դեմ մի միակ նպատակով, որ Աստծո (կամ Արիական) Ոգին չկարողանա հաստատվել մարդու մեջ և որպեսի վերջինը, ամբողջովին կորցնելով իր Արարչուն , որի պատկերը պետք է ներկայացնէր՝ երբեք չկարողանա դուրս գալ կենդանիների դասակարգից: Այդ պատճառով Նժդեհի ցեղակրոնը, փաստորեն, ոչ միայն կոչ է հայտնանք հիշելու իրեն ստեղծած Արարչի Ոգուն, այլև համընդհանուր կոչ է ուղված բոլոր ազգերին, որ նրանք էլ նույնն անեն, այսինքն հենվելով իրենց ձևավորած Արարչի Ոգու վրա՝ վտարեն իրենց միջից այն ամենը, ինչը չի պատկանում այդ Ոգուն, բայց պատկանում է մարմնի ոգուն, որ ձգտում է սպանել աստվածաստեղծ հոգուն:

Ուստի ցեղակրոնը դա հայերի նոր եվանգելիզացիայի փորձ էր (ցավոք, դեռ չավարտված), որի անհրաժեշտությունը ծագեց քրիստոնեությունը ընդունելուց 17 դար անց, քանի որ, հնազանդվելով աշխարհի իշխանությանը, նրանք, ըստ էության, հնազանդվեցին մահկանացու մարմնի ոգուն՝ ի վնաս իրենց հոգու ու, ինչպես և մյուս ժողովուրդները, կորցրեցին իրենց արիականությունը:

Այսպիսով, կարելի է ասել, որ ցեղակրոնը հակադրում էր իրեն աշխարհի չարին, որի ուժը մահվան մեջ է, և համարում էր, որ նրանից ազատվելու և հավերժության հորիզոններ մտնելու միակ ճանապարհը դա մահվան վախից ազատվելն է, և, եթե հարկավոր լինի, նաև « մահով մահը ոտնահարել»:

Ինչպես ակնհայտ է, սա նույն միտքն է, որ կարմիր գծով անցնում է ողջ Նոր Կտակարանով և լուռ՝ Նժդեհի բոլոր գրվածքների միջով:

«Կամ չ'գիտե՞ք՝ թե քանիներս որ Յիսուս Քրիստոսով մկրտուեցանք՝ նորա մահուանը մկրտուեցանք: Մկրտութիւնովը նորա հետ թաղուեցանք մահի մեջ. Որ ինչպէս Քրիստոսը Հօր փառքովը մեռելների միջից յարութիւն առաւ, այնպէս մենք էլ կեանքի նորոգութեան մեջ ման գանք: Որովհետեւ եթէ նորա մահի նմանութիւնովը նորա հետ տնկուեցանք, ապա նորա յարութեանն էլ նման կ'լինինք: Այս գիտենալով, որ մեր հին մարդը նորա հետ խաչուեցաւ, որ մեղքի մարմինը խափանուի, որ այլ եւս չ'ծառայենք մեղքին: Որովհետեւ նա որ մեռնում է՝ արդարացած է մեղքիցը: Եւ եթէ Քրիստոսի հետ մեռանք, հաւատում ենք՝ որ նորա հետ էլ կ'ապրենք: Գիտենալով որ՝ Քրիստոսը մեռելների միջից յարութիւն առած լինելով, այլ եւս չէ մեռնում, եւ մահը նորա վերայ այլ եւս չէ տիրում:» (Հրովմ 6: 3-9)

Ծանոթություններ

1. «Հերոսը — դա **մահէն աւելի զօրաւոր մարդն է**: Դա յաւիտենականի կրողն ու սպասաւորն է մեր անցաւոր կեանքում»: (Խորհրդածություններ «Ռեզումիկ», 1940թ., թիւ 156)
2. «**Ցեղակրօնութիւնը Հիթլերութիւն կը հոտի**»: Նա այսպէս չարամեկնեց, գիտնալով հանդերձ, որ ցեղակրօնութիւնը ծնունդ է առել մեր հայրենի Լեոնաշխարհի գլխին կախուած մեծ վտանգի օրերին, **երբ մարդկութիւնը լսած չէր Հիթլերականութեան մասին**: Յանձին մեր Դաւիթբեգեան ցեղապահ ուխտերի՝ 1920-ին գործեց ու յաղթանակեց ցեղակրօնութիւնը»: (Ցեղի հավիտենական զենքը «Տարօնի Արծիւ», Սոֆիա, 1938թ., թիւ 1-2),
3. «Հիշիր պատերազմը»: «Հայրենիք» Օրաթերթ, Բոստոն, 1930թ
4. «Հիշիր պատերազմը»: «Հայրենիք» Օրաթերթ, Բոստոն, 1930թ
5. «Ցեղափոխություն իբրեւ հաղթանակի զօրոյթ» «Խոռվք», Սոֆիա, 1932թ., թիւ 1
6. «ԷՋԵԲ ԻՄ ՕՐԱԳՐԷՆ»(Գրքույկով տպագրվել է Կահիրեում, 1924թ.)
7. «Ի՞նչ է ցեղակրոնությունը: Ցեղաին արթնացում»
8. «Ցեղափոխություն իբրեւ հաղթանակի զօրոյթ» «Խոռվք», Սոֆիա, 1932թ., թիւ 1
9. «Ցեղի հավիտենական զենքը» «Տարօնի Արծիւ», Սոֆիա, 1938թ., թիւ 1-2
10. «Ցեղափոխություն իբրեւ հաղթանակի զօրոյթ» «Խոռվք», Սոֆիա, 1932թ., թիւ 1
11. «Իմ ցեղը, իմ ժառանգած էութիւնը, իմ **նախահոգին** — ահա տիեզերաըմբռնումի միակ բանալին»: (Խոսաբցություն մը գորավար Գ.Նժդեհի հետ «Ռեզումիկ», 1943թ., թիւ 169-174)
12. Նա ժամանակների վկան է, յաւիտենական հայը, Աստուծոյ գործակիցը: (Ցեղափոխություն իբրեւ հաղթանակի զօրոյթ «Խոռվք», Սոֆիա, 1932թ., թիւ 1)

13. «Խոսաքցություն մը գորավար Գ.Նժդեհի հետ» «Ռազմիկ», 1943թ., թիւ 169-174
14. «Ըստ մեզ — ասենք առանց տեսական խորացումների — ցեղն աւելի հոգի է, քան կալ»: (Ցեղափոխություն իբրեւ հաղթանակի գորոյթ «Խռովք», Սոֆիա, 1932թ., թիւ 1)
15. «Ահա՛ թէ ինչու եմ ասում՝ դարձ դէպի ցեղը, որ ենթադրում է ոգի եւ արիւն»: (Մեր նոր սերունդը «Ռազմիկ», 1941թ., թիւ 5, 7)
16. «Արիական» բառի նշանաւորւթյան մասին նախքան իմ հոդվածներում «Նախահայր Հայկի մասին Ավանդութեան աստվածաշնչական արմատները» և «Ժողովուրդ, արիացիներ, սենիթներ և քամայաններ հասկացությունների մասին»: Բուենոս Այրես, 2019:
17. Ժողովուրդների համար — որոնք իրենց պատմութեան մէջ յայտնաբերում են այն, **ինչ որ գորութենապէս դրուած է իրենց արեան մէջ ժողովուրդների համար խորապէս ցեղորէն ապրելը** (ներցեղային բարոյականով առաջնորդուելը) դառնում է անհրաժեշտութիւն հետեւեալ պատճառներով. (Հայու ճամբան՝ մեծ զոջումի ճամբան «Ռազմիկ», 1941թ., թիւ 24, 25)
18. «Հիշիր պատերազմը»: «Հայրենիք» Օրաթերթ, Բոստոն, 1930թ
19. «Հիշիր պատերազմը»: «Հայրենիք» Օրաթերթ, Բոստոն, 1930թ
20. «Ի՞նչ է ցեղակրոնությունը: Ցեթաին արթնացում»
21. Զմոռանա՛նք, չմոռանա՛նք, չմոռանա՛նք այդ իրողութիւնը, որպէսզի այսուհետեւ աւելի ջերմ պաշտամունքով փարինք մեր ցեղին, իբրեւ մեր միակ ապաւենին, **իբրեւ մեր երկրորդ աստուածութեան**: (Հայու ճամբան՝ մեծ զոջումի ճամբան «Ռազմիկ», 1941թ., թիւ 24, 25)
22. «Հիշիր պատերազմը»: «Հայրենիք» Օրաթերթ, Բոստոն, 1930թ
23. «Խոսաքցություն մը գորավար Գ.Նժդեհի հետ» «Ռազմիկ», 1943թ., թիւ 169-174
24. «Հայու ճամբան՝ մեծ զոջումի ճամբան» «Ռազմիկ», 1941թ., թիւ 24, 25)
25. «Ցեղափոխություն իբրեւ հաղթանակի գորոյթ» «Խռովք», Սոֆիա, 1932թ., թիւ 1
26. Ի՞նչ է ցեղակրոնությունը: Ցեթաին արթնացում»
27. Ավելի մանրամասնորին դրա մասին կարդալ իմ վերը նշված Հայկի մասին հոդվածում:
28. «Ցեղի հավիտենական զենքը» «Տարօնի Արծիւ», Սոֆիա, 1938թ., թիւ 1-2
29. «Ցեղի հավիտենական զենքը» «Տարօնի Արծիւ», Սոֆիա, 1938թ., թիւ 1-2
30. Ընդունել ցեղի գերագահութիւնը ժողովրդի վրայ, նշանակում է՝ ընդունել յաւիտենականի գերագահութիւնը առօրեայի, ոգուն՝ նիւթի վրայ: (Խոսաքցություն մը գորավար Գ.Նժդեհի հետ «Ռազմիկ», 1943թ., թիւ 169-174)
31. արիացի՛ր, քանզի քեզ հետ է ցեղը, որն ապրել է ուզում: Դա ասել է՝ նայէ՛, **վերենւ աչք կայ**, որ տեսնում է քեզ, արթուն **աչքը նախահայրիդ**, որ կը հետեւի քո բոլոր շարժումներին:(Հիշիր պատերազմը: «Հայրենիք» Օրաթերթ, Բոստոն, 1930թ)
- 32.«Վահագնի հետ պիտի խօսի հայ մարդը հիմա — **Աստուածը հին հայոց, Աստուածը Արիութեան և Յաղթանակի**»: (Անարիությունը— մայր չարյաց «Արարս» օրաթերթ, Սոֆիա 1926թ., 11 փետրվար)
33. Խոսաքցություն մը գորավար Գ.Նժդեհի հետ «Ռազմիկ», 1943թ., թիւ 169-174
34. Այստեղ ցանկանում եմ նշել, որ հեթանոսությունն ու լինելիականությունը առհասարակ հակասում են իրար, և այդ պատճառով «հայոց հեթանոս կրոնի» փոխարեն այստեղ ավելի տեղին կլինէր օգտագործել «հին հայկական հավատք» արտահայտությունը:
35. Ցեղափոխություն իբրեւ հաղթանակի գորոյթ «Խռովք», Սոֆիա, 1932թ., թիւ 1

36. Խոսաբցություն մը գորավար Գ.Նժդեհի հետ «Ռազմիկ», 1943թ., թիւ 169-174
37. Մեծ գաղափար «Ռազմիկ», 1943թ., թիւ 159
38. Յեղափոխություն իբրեւ հաղթանակի զօրոյթ «Խոռվք», Սոֆիա, 1932թ., թիւ 1
39. Երբ հայրենասիրությունը ցեղասիրություն չէ «Ռազմիկ», 1941թ., թիւ 11, 12
40. Մեռնելու կամք «Տարօնի Արծիւ», Սոֆիա, 1939թ., թիւ 7
41. Ինչու տարոնականություն «Տարօնի Արծիւ», Սոֆիա, 1938թ., թիւ 5-6
42. Հայրենիք, խորհրդածություններ «Ռազմիկ», 1941թ., թիւ 2
43. Մեռնելու կամք «Տարօնի Արծիւ», Սոֆիա, 1939թ., թիւ 7
44. «Մըսա-Ղազի 40 օրը» գրքի հեղինակը
45. «Յեղօրէն անինքնաճանաչ է հայութիւնը: Ամօ՛ թ մեզ — օտարը, Ֆրանց Վերֆելը պիտի գար ասելու — «ոգու ժողովուրդ է հայր»: **Այո՛, ոգու ժողովուրդ ենք** եւ այդ իսկ պատճառով այն բոլոր վարդապետութիւնները, որոնք դիմագուրկ ոգու ճնունդ են, օրինակ՝ սոցիալիզմ, բոլշեւիզմ, կոսմոպոլիտիզմ — մնում են անմարսելի եւ անհարազատ հայ հոգու համար: (Յեղի հավիտենական զենքը «Տարօնի Արծիւ», Սոֆիա, 1938թ., թիւ 1-2)
46. Յեղի հավիտենական զենքը «Տարօնի Արծիւ», Սոֆիա, 1938թ., թիւ 1-2
47. Խոսաբցություն մը գորավար Գ.Նժդեհի հետ «Ռազմիկ», 1943թ., թիւ 169-174
48. Հայու ճամբան՝ մեծ զոջումի ճամբան «Ռազմիկ», 1941թ., թիւ 24, 25
49. Հայ դասական արհուրթիւնը «Արաքս», 1930թ., թիւ 25, 26, 27
50. Ինչու տարոնականություն «Տարօնի Արծիւ», Սոֆիա, 1938թ., թիւ 5-6
51. Խոսաբցություն մը գորավար Գ.Նժդեհի հետ «Ռազմիկ», 1943թ., թիւ 169-174
52. Նժդեհի ճառը՝ հաւ հեղափոխական արարչին արտասանված 1924 թվականին, Սոֆիայի գերեզմանատան մեջ, Քրիստափոր Միքայելյանի հուշարձանի բացման առթիվ: «Հայաստան», Պլովդիվ, 1924թ., թիւ 29
53. Ոգու մարդ եմ, եւ իբրեւ այդպիսին, միանգամայն անյարմար այն բոլոր պաշտօնների համար, որոնք ենթակայից որոշ աստիճանաւորութիւն են պահանջում: Ինձ տուած չէ քայլել մարդու հետեւից, եթէ նա թագաւոր իսկ լինի: Խղճմտանքէս զատ ես ճանաչում եմ երկու գերագոյն դատաւորներ եւս — Աստուած եւ Ժողովուրդ: (Անձնավկայի թիվն)
54. **Գ. ՆՇՂԵՀԻ ԴԱՄԲԱՆԱԿԱՆ ՃԱՌԸ ԼԵՈՊՈՎԻ ԴՍԳԱՂԻ ԱՌԱՋ**
«Ռազմիկ», 1941թ., թիւ 9
55. Հայ աստվածաբանության մեջ *ոգու* և *հոգու* տարբերությունը պարզաբանված չէ և այդ պատճառով Աստվածաշնչի թարգմանության մեջ երբեմն խառնվում է:
56. Մանրամասությունների համար դիմել իմ «Ժողովուրդ», «արիացիներ», «սեմիտներ» և «քամյաններ» հասկացությունների մասին» հոդվածին: www.criteriocristiano.com.ar
57. «Հայու ճամբան՝ մեծ զոջումի ճամբան», «Ռազմիկ», 1941թ., թիւ 24, 25
58. «Յեղափոխություն իբրեւ հաղթանակի զօրոյթ», «Խոռվք», Սոֆիա, 1932թ., թիւ 1
59. «Հայու ճամբան՝ մեծ զոջումի ճամբան», «Ռազմիկ», 1941թ., թիւ 24, 25
60. «Յեղափոխություն իբրեւ հաղթանակի զօրոյթ», «Խոռվք», Սոֆիա, 1932թ., թիւ 1)
61. Յեղակրոնի դավանանքը
62. «Յեղափոխություն իբրեւ հաղթանակի զօրոյթ», «Խոռվք», Սոֆիա, 1932թ., թիւ 1
63. «Հիշիր պատերազմը»: «Հայրենիք» Օրաթերթ, Բոստոն, 1930թ
64. «տարօնաշունչ հայր իր մահով կը յաղթանակէր մահը եւ իրեն կ'ենթարկէր յաւիտենական կենսքը՝ անմահութիւնը»: (Տարօնականության Մասին «Ռազմիկ», Պլովդիվ, 1938թ., թիւ 46)

65. «Դա ձգտումն է՝ վազքը մեր ցեղի ոգու - մեր լուսեղէն նշանագրերի - դէպի արեւը, կէանքի աղբիւրը, լոյսը»: (Տարօնականության Մասին «Ռազմիկ», Պլովդիվ, 1938թ., թիւ 46)
66. «Օրերի Օրը», «Արաքս», Սոֆիա, 1926թ., թիւ 99)
67. «Ինչու տարոնականություն», «Տարոնի արծիվ», Սոֆիա, 1938թ., թիվ 5-6
68. «Ցեղափոխություն իբրեւ հաղթանակի զօրոյթ», «Խռովք», Սոֆիա, 1932թ., թիւ 1
69. «Հայ դասական արիւթիւնը» «Արաքս», 1930թ., թիւ 25, 26, 27)
70. «Խորհրդածություններ», «Ռազմիկ», 1940թ., թիւ 156
71. «Ցեղի հավիտենական զենքը», «Տարօնի Արծիւ», Սոֆիա, 1938թ., թիւ 1-2)
72. «Ո՛չ, ո՛չ ճշմարտութիւններ կան, որոնք անմեռ են, յաւիտենական, (...) Այդ կարգի ճշմարտութիւններից են նրանք, որոնք վերաբերում են հայրենիքին, մահուան, յաղթանակին, առաջնորդին, պարտականութեան եւ այլն: (Տարօնականության Մասին «Ռազմիկ», Պլովդիվ, 1938թ., թիւ 46)
73. «Ի՞նչ է ցեղակրոնությունը: Ցեղաին արթնացում»
74. Խոսաքցություն մը զորավար Գ.Նժդեհի հետ», «Ռազմիկ», 1943թ., թիւ 169-174
75. «Մի զինվորի ճշմարտությունները», «Ռազմիկ», 1941թ., թիւ 33)
76. «Ընդհակառակը՝ կ'ընկնեն, կը պարտւեն, կը մեռնեն ժողովուրդները, երբ կը թունաւորուեն **անասնացող նիւթապաշտութեամբ**, երբ նրանց մեծամասնութիւնը **իբր Աստուածը կը դարձնէ անձնական կաշին**, երբ **կը ժխտէ այլասիրական ամեն տեսակի պարտականութիւն** եւ վախով ու անվստահութեամբ կը նայէ իր ապագային:», (Օրերի Օրը, «Արաքս», Սոֆիա, 1926թ., թիւ 99)
77. «Հիշիր պատերազմը:», «Հայրենիք» Օրաթերթ, Բոստոն, 1930թ
78. Հակառակ իր ստեղծած մեծ քաղաքակրթութեան՝ մարդը այսօր էլ դեռ աւելի կաւ է, քան՝ ոգի: Այդ իսկ պատճառով, նա յաճախ առհաւօրէն մղում է ընդվզելու այն բոլոր զսպիչ արժեքների, ճշմարտութեանց եւ սրբութիւնների դէմ, որոնք կոչուած են սանձուած պահելու անասունն ու անասնականութիւնը նրա մէջ: (Խոսաքցություն մը զորավար Գ.Նժդեհի հետ «Ռազմիկ», 1943թ., թիւ 169-174)
79. Երջանկության պրորէմը
80. Գարեգին Նժդեհ. «Կտակ», «Ռազմիկ» 25 Դեկտ. 1940, թիւ 1
81. «Հիշիր պատերազմը:», «Հայրենիք» Օրաթերթ, Բոստոն, 1930թ
82. «Անարիությունը— մայր չարյաց», «Արաքս» օրաթերթ, Սոֆիա 1926թ., 11 փետրվար
83. «Հիշիր պատերազմը:», «Հայրենիք» Օրաթերթ, Բոստոն, 1930թ
84. «Խոսաքցություն մը զորավար Գ.Նժդեհի հետ», «Ռազմիկ», 1943թ., թիւ 169-174
85. «Բարոյական դեմոկրատիան, մարդկային արարածի անկատարելութեան պատճառով, կը մնայ երազ, ինչպէս երազ մնաց ճշմարիտ քրիստոնէութիւնը: Իսկ թուաբանական դեմոկրատիայի դեկավարները, թուղթի վրայ, տեսականօրէն, ենթարկուելով հանրութեան կամքին, գործնականում — պառակտելով եւ աղաւաղելով ազգի ոգին — նրան ծառայեցնում են իրենց անձնական եւ խմբակցական շահերին: Մարդկային բանականութեան ու բարոյականի կողմից ժխտուած այդ անիշխանացուցիչ ու ապականարար վարչաձեւի, ինչպէս եւ իր հոգեւոր ծնող լիբերալիզմի գերեզմանի փորձ էր եւրոպական պատերազմը» (Պատերազմ՝ ցեղափոխություն «Ռազմիկ», 1941թ., թիւ 13, 14, 15)
86. «Յաղթական մարդիկ չեն ծնւում **նիւթապաշտիկ մարքսականութիւնից**, ընկերվարութիւնից: Զինուորութիւնը — ամեն բանից առաջ — հոգեվիճակ է: Իբրեւ

- արուեստ՝ դա հայրենի հողի համար խիզախել ու մեռնել գիտնալու արուեստ է:»
(Պատմության դատաստանը «Ռազմիկ», 1941թ., թիւ 26, 27)
87. «Հայ հոգին պահել անառիկ **ազգասպան լենինականութեան** յարձակումների դէմ:»
(Ի՞նչ է ցեղակրոնությունը: Ցեթաին արթնացում)
 88. «Հայու ճամբան՝ մեծ զոջումի ճամբան», «Ռազմիկ», 1941թ., թիւ 24, 25
 89. «Յեղ թէ կուսակցություն», «Ռազմիկ», 1942թ., թիւ 3
 90. «Մեծ գաղափար», «Ռազմիկ», 1943թ., թիւ 159
 91. «Մեծ գաղափար», «Ռազմիկ», 1943թ., թիւ 159
 92. «Հայու ճամբան՝ մեծ զոջումի ճամբան», «Ռազմիկ», 1941թ., թիւ 24, 25
 93. «Ի՞նչ է ցեղակրոնությունը: Ցեթաին արթնացում»
 94. Գարեգին Նժդեհ. «Կտակ», «Ռազմիկ» 25 Դեկտ. 1940, թիւ 1
 95. «Ինչու տարոնականություն», «Տարոնի Արծիւ», Սոֆիա, 1938թ., թիւ 5-6
 96. «Անարիությունը— մայր չարյաց», «Արաքս» օրաթերթ, Սոֆիա 1926թ., 11 փետրվար
 97. «Խոսաքցություն մը զորավար Գ.Նժդեհի հետ», «Ռազմիկ», 1943թ., թիւ 169-174
 98. «Խոսաքցություն մը զորավար Գ.Նժդեհի հետ», «Ռազմիկ», 1943թ., թիւ 169-174
 99. «Խոսաքցություն մը զորավար Գ.Նժդեհի հետ», «Ռազմիկ», 1943թ., թիւ 169-174
 100. «Մեր նոր սերունդը», «Ռազմիկ», 1941թ. թիւ 5. 7
 101. «Ի՞նչ է ցեղակրոնությունը: Ցեթաին արթնացում»
 102. «Մեծ գաղափար», «Ռազմիկ», 1943թ., թիւ 159
 103. «Խոսաքցություն մը զորավար Գ.Նժդեհի հետ», «Ռազմիկ», 1943թ., թիւ 169-174
 104. «Խոսաքցություն մը զորավար Գ.Նժդեհի հետ», «Ռազմիկ», 1943թ., թիւ 169-174
 105. «Օրերի Օրը», «Արաքս», Սոֆիա, 1926թ., թիւ 99)
 106. Նայիր 32 (Խոսաքցություն մը զորավար Գ.Նժդեհի հետ «Ռազմիկ», 1943թ., թիւ 169-174)
 107. «Խոսաքցություն մը զորավար Գ.Նժդեհի հետ», «Ռազմիկ», 1943թ., թիւ 169-174
 108. «Ցեղակրոնի մտածողութիւնն է հարազատօրէն հայկական ու արիական»
(Զոր.Գ.Նժդեհի խոսքը Հայաստանի անկախության 25- ամյակի տոնակատարության առթիվ «Ռազմիկ», 1943թ., թիւ 114)
 109. «Հայրենիք, խորհրդածություններ», «Ռազմիկ», 1941թ., թիւ 2
 110. «Ի՞նչ է ցեղակրոնությունը: Ցեթաին արթնացում»
 111. «Մեռնելու կամք», «Տարոնի Արծիւ», Սոֆիա, 1939թ., թիւ 7
 112. «Մեռնելու կամք», «Տարոնի Արծիւ», Սոֆիա, 1939թ., թիւ 7
 113. «Ինչու տարոնականություն», «Տարոնի Արծիւ», Սոֆիա, 1938թ., թիւ 5-6
 114. «Հիշիր պատերազմը», «Հայրենիք» Օրաթերթ, Բոստոն, 1930թ
 115. «Անարիությունը— մայր չարյաց», «Արաքս» օրաթերթ, Սոֆիա 1926թ., 11 փետրվար
 116. «Հիշիր պատերազմը:», «Հայրենիք» Օրաթերթ, Բոստոն, 1930թ
 117. «Հիշիր պատերազմը:», «Հայրենիք» Օրաթերթ, Բոստոն, 1930թ
 118. «Ցեղի հավիտենական զենքը», «Տարոնի Արծիւ», Սոֆիա, 1938թ., թիւ 1-2
 119. «Երջանկության պրոբլեմը»
 120. «Տարածուող Անին», «Արաքս», Սոֆիա, 1926թ, թիւ 233)
 121. ճակատագիրը, զուցէ եւ վերջին անգամ, **փորձում է մեզ - հայն արժանի՞ է եւ ի վիճակի՞ անկախ հայրենիք ունենալու, թէ՞ ոչ:** (Տարածուող Անին «Արաքս», Սոֆիա, 1926թ, թիւ 233)
 122. «Մի զինվորի ճշմարտությունները», «Ռազմիկ», 1941թ., թիւ 33

123. «Մի զինվորի ճշմարտությունները», «Ռազմիկ», 1941թ., թիւ 33
124. «Մի զինվորի ճշմարտությունները», «Ռազմիկ», 1941թ., թիւ 33
- 125.. «մինչեւ որ մեր հարեւանները իրար մեջ մեր ցեղի «զգեստները կը բաժանէին»: (Բաց նամակ Մայքլ Արլենին «Նոր Արաքս», Սոֆիա, 1930թ., թիւ 11, 12, 15-18)
126. Աշխարհի ամենէն անիծապարտ բռնապետութեան արնոտ ձեռքով կը խաչուէր հայ ժողովուրդը: Գողգոթայէն՝ (Նժդեհի ճառը՝ հաւ հեղափոխական արարչին արտասանված 1924 թվականին, Սոֆիայի գերեզմանատան մեջ, Քրիստափոր Միքայելյանի հուշարձանի բացման առթիվ: «Հայաստան», Պլովդիվ, 1924թ., թիւ 29)
127. «Եվ հէնց սրանումն է մեր դրութեան փշեպսակը, ինչպէս եւ մեր փրկութեան գրաւականը՝ միաժամանակ»: (Յեղափոխություն իբրեւ հաղթանակի զօրոյթ «Խոռովք», Սոֆիա, 1932թ., թիւ 1)
128. (տառապանքը որպէս միջոց մեր հաւաքական վերածնունդի եւ քաղաքական փրկութեան): (Ի՞նչ է ցեղակրոնությունը: Յեթաին արթնացում»)
129. «Նժդեհի ճառը՝ հաւ հեղափոխական արարչին արտասանված 1924 թվականին, Սոֆիայի գերեզմանատան մեջ, Քրիստափոր Միքայելյանի հուշարձանի բացման առթիվ:», «Հայաստան», Պլովդիվ, 1924թ., թիւ 29)
130. «Էջեր իմ օրագրեն», Կահիրե, 1924թ.
131. «Էջեր իմ օրագրեն», Կահիրե, 1924թ.
132. «Ինչու տարոնականություն», «Տարօնի Արծիւ», Սոֆիա, 1938թ. , թիւ 5-6
133. «Խորհրդածություններ», «Ռազմիկ», 1940թ., թիւ 156
134. «Հիշիր պատերազմը», «Հայրենիք» Օրաթերթ, Բոստոն, 1930թ
- 135.«Էջեր իմ օրագրեն», Կահիրե, 1924թ.
136. «Նոր սերունդը», «Ռազմիկ», 1941թ., թիւ 4
137. «Խոսաքցություն մը գորավար Գ.Նժդեհի հետ», «Ռազմիկ», 1943թ., թիւ 169-174
138. «Հիշիր պատերազմը:», «Հայրենիք» Օրաթերթ, Բոստոն, 1930թ
139. «Հիշիր պատերազմը:», «Հայրենիք» Օրաթերթ, Բոստոն, 1930թ
140. «Հիշիր պատերազմը:», «Հայրենիք» Օրաթերթ, Բոստոն, 1930թ
141. «Յեղիմաստություն», «Ռազմիկ», 1941թ., թիւ 8
142. «Մի ժողովրդի ինքնագիտակցումը հնարաւոր է միայն իր պատմութեան միջոցաւ»: (Խոսաքցություն մը գորավար Գ.Նժդեհի հետ «Ռազմիկ», 1943թ., թիւ 169-174)
143. «Խոսաքցություն մը գորավար Գ.Նժդեհի հետ», «Ռազմիկ», 1943թ., թիւ 169-174
- 144.«Հիշիր պատերազմը:», «Հայրենիք» Օրաթերթ, Բոստոն, 1930թ
145. «Հիշիր պատերազմը:», «Հայրենիք» Օրաթերթ, Բոստոն, 1930թ
146. «Ինչու տարոնականություն», «Տարօնի Արծիւ», Սոֆիա, 1938թ. , թիւ 5-6
147. «Մեր նոր սերունդը», «Ռազմիկ», 1941թ., թիւ 5, 7
148. «Ռազմիկը չի մեռնում», 1955, մայիս
149. «Հայու ճամբան՝ մեծ զոջումի ճամբան», «Ռազմիկ», 1941թ., թիւ 24, 25
150. «Էջեր իմ օրագրեն», Կահիրե, 1924թ.
151. «Անձնավկայի թիվն»
152. «Ռազմիկը չի մեռնում», 1955, մայիս
153. [Գ. ՆՇԴԵՀԻ ԴԱՄԲԱՆԱԿԱՆ ՃԱՌԸ ԼԵՈՊՈՎԻ ԴԱԳԱՂԻ ԱՌԱՋ](#), «Ռազմիկ», 1941թ., թիւ 9

154. «Նժդեհի ճառը՝ հաև հեղափոխական արարչին արտասանված 1924 թվականին, Սոֆիայի գերեզմանատան մեջ, Քրիստափոր Միքայելյանի հուշարձանի բացման առթիվ:», «Հայաստան», Պլովդիվ, 1924թ., թիւ 29)
155. «Անձնավկայություն»

Բուէնոս Այրես 2020